



192 b



66
10 MAY 2011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱԼԻԱՅԱԿԵՆ ԽՈՐՀԻԴԵՑԻՆ ՀԵՆՐԵՎԵՏՈՒԹՅՈՒՆ
ՊՐՈԼԵՏԱՐՈՒՅԻՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՈՅԵՐԻ, ՄԻԱՅԵՔ!

91(075)
5-28

ԴԱՍԱԳԻՐՔ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ

Ա.ՌԱԶԻՔ Ա.ԱՏԻՃԱՆԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կ ա զ գ մ ե ց
Հ. ԵԼԻՇՎԻԼԻ

91(075)
5-28



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ - 1926.

ՀԱՌԱՋԱԲԱՆ

Այս դասագիրքը գրված է I աստիճանի դպրոցի Դ. Խմբակի համար և նպատակն է չորսամյակն ավարտողին մի վորոշ հասկացողություն տալ Փիզ. աշխարհագրության տարրերի, յերկրագնդի ձևի և կազմության, աշխարհամասերի և ովկիանոսների, ինչպես և ժամանակակից գլխավոր պետությունների ու նրանց գաղութների մասին և ընդհանրապես լայնացնել աշակերտի աշխարհագրական և քաղաքական հորիզոնները:

Ինչպես ընթերցողն ել տեսնում է, գիրքը գրված է սեղմ, համառոտ և նյութն ել սահմանափակ է: Յեթե պատկերներն ու քարտեզները հաշվելու շինուազ նյութը կրոնի վոչ ավել քան 50 յերես: Յեվ դա արված է գիտավորացիքի կերպով: Նախ աշխարհագրության այս գասընթացը կոմպլեքսային ե («Հոկտեմբերյան Հեղափոխությունը և նրա համաշխարհային նշանակությունը»), յերկրորդ՝ դասագիրքը վորքան համառոտ և պարզ յեղավ, այնքան աշակերտն ու ուսուցիչը շահված կլինեն:

Յեթե այսոււամենայնիվ կրծատման կարիք զգացվեց, ցանկալի յե, վոր այդ կրծատումը կատարվի վաղորոք և այն ել ֆիզիկական աշխարհագրությունից, բայց վոչ յերկրորդ մասից (առանձին աշխարհամասերից և պետություններից): Դասընթացը առանցքը պետք ե գարճնել աշխարհամասերի ընդհանուր նկարագրությունը, յեվ պետությունները:

Վերջապես այս գասընթացն անցնելուց առաջ աշակերտներն արդեն աշխարհագրական մի վորոշ պատրաստություն ձեռք են բերել ուստի շատ աշխարհագրական հասկացողություններ (մասշտաբ, քարտեզ, հորիզոն, հորիզոնի կողմերը և այլն) չեն բացատրված: Յենթագրվում է, վոր աշակերտներն այդ հարցերին արգեն ծանոթ են:

Աշակերտի խնդուրույնությունը վեր հանելու, աշխատանքը արդյունավոր դարձնելու համար գրքին կցված են բոլոր անհրաժեշտ քարտեզները. բացի այդ, առանձին հրատարակված են «Աշխարհագրական տեսքը» գործնական պարագմունքների համար և «Աշխարհ. զրույցները» ընթերցանության համար: Դասագիրքը, «Աշխարհագր. տեսքը» և «Աշխարհագր. զրույցները» կազմում են մի ամբողջություն, լրացնում, ոժանդակում են իրար: Թի ինչպես և յերբ պետք ե ոգտվել «Աշխարհագրական տեսքից» և «Աշխարհ. զրույցներից», այդ մասին գտնագրը մեջ համապատասխան տեղերում ցուցմունքներ տրված են:

Ժամանակակից պետությունների և յերկրների մեջ ընտրություն անելիս զեկագրվել են նրանով, վոր աշակերտը մի վորոշ գաղափար ունենաւ իմպերիալիստական պետության (Անգլիա կամ Յապոնիա), գաղութային յերկրի (Հնդկաստան) և կիսագլության պետության, որինակ՝ Չինաստանի մասին: Առանց այս հասկացողությունների աշակերտը զժվարությամբ կըմբռնի Հնդկաստանի դժգոհությունն Անգլիայի դեմ, Մարտկույթի ապատամբությունը ֆրանսիայի դեմ: Այս խնդիրները պետք ե կենդանի զրույցի նյութ լինեն:

Հ. Ե.



3250 8-61

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՀԱՄԱՐՈՂԸ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

I. ՅԵՐԿՐԱԴՈՒՆԴՈՒՆ

Աշխատանք. — Վերցրեք մի վորեւ գնդակ կամ կավից խնդները պատրաստեցեք: Դիտեցեք գնդակը և ասացեք՝ նրա յերեսը տափակ և, թե ուսուցիք: Ամբողջ յերեսն ե ուսուցիք, թե տեղատեղ միայն:

Գնդակի վրա մի կետ նշանակեցեք և ապա այդ կետից կավճով մի գիծ քաշեցեք գեղի աջ, բայց վերու վար չծռեք: Զեր բաշած գիծը վերջն ուր հասավ:


Թելով գնդակի շուրջը մի անգամ պատ տվեք և ապա գրանով վորշեցեք գնդակի շրջագծի մեծությունը: Նույն յեղանակով գնդակի շրջագիծը չափեցեք մի քանի ուղղությամբ և տեսեք, թե ամեն ուղղությամբ նույն թիվը ե ստացվում:

Գուլպայի ճաղն անցկարցեք գնդակի միջով, բայց աշխատեցեք, վոր ճաղը գնդակի կենտրոնով անցնի: Գտեք տրամագծի մեծությունը:

Յերկրի ձեվը. — Հին ժամանակ մարդիկ մեր յերկրի և նրա ձեփի մասին ճիշտ հասկացողություն չունեյին: Այն ժամանակ վոչ միայն տգետ մարդիկ, այլև գիտնականներն ել կարծում եյին, թե յերկիրը տափարակ տարածություն ե, շրջապատված անսահման ծովով: Շատ ժամանակ անցավ, մինչեւ վոր մարդիկ վերջապես հասկացան, վոր յերկիրը գնդի ձև ունի:

Վոր յերկիրը գնդածե և, յերեւում ե հետեւալ փաստերից:

Յերբ ծովափին կանգնած նայում ենք նավին, տեսնում ենք, վոր հեռանալու ժամանակ հօրիզոնի տակ նախ ծածկվում ե նավի ստորին մասը, ապա միշտնը և գերջը՝ վերին մասը: Հնդիականակը, յերբ նավը



Նկ. 1. Մովափից հեռացող նավը հետպահեած ծածկվում ե հօրիզոնի տակ:

4

մոտենում ե, առաջ յերկում ե նրա վերին մասը և ապա ստո-
րինը: Այս յերկույթը ցույց է տալիս, վոր մեր և նավի միջն յե-
րի շրի յերեսը տափակ չե, այլ ուռած, դուրս ընկած: Յեթե ջրի
յերեսը տափակ լիներ, նավը ամբողջովին պետք է միանգամբ ծածկ-
վեր և միանգամբ ել յերեար: Նույնպիսի մի յերկույթ մենք տես-
վեր և միանգամբ հարաբերակ լինեար: Խորհրդային Միության Յեվրոպական մա-
սը, ինչպես զիտեք, մի ընդարձակ հարթություն ե: Յերբ այդ հար-
սը, ինչպես զիտեք, մի ընդարձակ հարթություն են վորեե զյուղի, նախ տես-
նում են բարձր առարկաները (ծառերի կատարները), ապա տները
և այլ ցածր տեղեր:


Ուրեմն յերկիրը ամենահարթ, հավասար տեղերում անդամ տա-
փարակ չե, թե ծովը և թե ցածրպը, վոր կողմն ել նայելու լինենք,
մեզ ուռուցիկ են յերեում:



Նկ. 2. Ծովափին մոտեցող նավը միանգամբ չենք տեսնում:

Յեթե յերկիրն ամեն կողմից ուռուցիկ ե, նշանակում է նա գնդա-
մե ե, ինչպես ձեր գնդակը, խնձորը, ձմերուկը: Այդ բանում մարդիկ
վերջնականապես համոզվեցին այն ժամանակ, յերբ մի քանի հայտնի
հանապարհորդներ կարողացան պատվել յերկրի շուրջը: Յեթե մենք
դուրս գանք մեր բնակավայրից և շարունակ գնանք նույն ուղղությամբ,
որինակ գեպի արևելք, և չծովենք դեպի հյուսիս կամ հարավ՝ վերջը
կպանք նույն տեղը, բայց հակառակ կողմից, այսինքն արևմուտքից:

Առաջին անդամ այսպիսի շուրջ-
մերկրյա ճանապարհորդություն կա-
տարեց Մագելլանը մեջնից մոտ 400
տարի առաջ: Շուրջյերկրյա ճանա-
պարհորդությունների ժամանակ մար-
դիկ իմացան, վոր յերկրի շրջագիծը
ամեն ուղղությամբ հավասար է: Յե-
թե յերկիրը գնդամե չլիներ, այն
գեպում շրջագիծն ամեն ուղղու-
թյամբ հավասար չեր լինի:



Նկ. 3. Մրջունները պատվում գնդակի
շուրջը: Նրանցից մեկը նոր և դուրս յե-
կել է կետից:

Մեր յերկիրը շատ մեծ գունդ է. Նրա տրամագիծն է մոտ
12.700 կիլոմետր կամ 12.000 վերսա, իսկ շրջագիծն է մոտ 40.000
կիլոմետր կամ մոտ 38.000 վերսա: Մինչև յերկրագնդի կենտրոնը
մոտ 6.300 կիլոմետր է (6000 վերսա): Յերկրագնդը վոչ մի բանի
վրա ամրացած չե. Նա ամեն կողմից շրջապատված է ողով: Ուր ել
գնալու լինենք, ամեն տեղ մեր գլխավերել յերկինքն է, իսկ վոտք-
ներիս տակը՝ յերկիրը: Յերկրագնդի հակառակ կողմերում գտնվող
մարդիկ իրար դարձած են լինում վոտքերով և շրջապատող տարա-
ծության մեջ չեն ընկնում, վորովհետեւ յերկիրը նրանց դեպի ինքն ե
քաշում:

Արևը ծագելիս լուսավորում է նախ բարձր սարերի կատարները,
ապա ցածր տեղերը. ինչո՞ւ:

Բարձր սարի կատարից ավելի մեծ տարածություն է յերեում. ինչո՞ւ:
Նարնջի վրա կամ փոքրիկ փոսիկներ և ցցվածքներ, բայց այդ
աննշան խորդուրդությունները նրա գնդանությանը չեն խանգարում:
Յերկրի վրա կան լեռներ, ձորեր, հովիներ. հապա ինչո՞ւ յերկիրը
դնդան ենք համարում:

Գլոբուս.—Յերկրագնդը լավ
պատկերացնելու համար մարդիկ
թղթից կամ գաճից պատրաստում
են մի գունդ, վորի վրա գույներով
և զանազան նշաններով նշանա-
կում են ծովեր, ցածրքներ, լճեր,
լեռներ, քաղաքներ և այլն: Այդ
գունդը կոչվում է զլորուս: Գլո-
բուսի միջով անցնում է մի ձող,
վորի շուրջը զլորուսը հեշտու-
թյամբ պտտվում է: Այդ ձողը կոչ-
վում է առանցք:

Գլոբուսի այն յերկու կետերը,
վորտեղ առանցքի ծայրերը դուրս
են գալիս՝ կոչվում են բնվեռներ,
վերկինը՝ հյուսիսային, իսկ ներ-
քեինը՝ հարավային թեքնո: Գլո-
բուսի շուրջը, բեկոններից հավասա-
րապես հեռու, անցնում է մի շր-



Նկ. 4. Գլոբուս

ջագիծ, վոր կոչվում ե հասարակած: Հասարակածով գլոբուսը բաժանվում ե յերկու կիսագնդերի՝ հյուսիսային և հարավային:

Հյուսիսային թևուը մի շարք գծերով միացած ե հարավային բերդի հետ: Այդ գծերը կոչվում են միջորեսականներ: Միջորեսականներից մեկը, վոր անցնում ե Անդիայի Դրինից (Լոնդոնի մոտ) քաղաքի վրայով, ընդունված ե վորպես գլխավոր միջորեսական: Դիմավոր միջորեսականով յերկրագունդը բաժանվում ե արեվելյան և արեվմոյան կիսագնդերի: Արեւելյան կիսագունդը գտնվում է գլխավոր միջորեսականի աջ կողմը, իսկ արեւմտյան կիսագունդը՝ ձախ կողմը:

Յերկրագունդն ել գլոբուսի նման ունի յուր առանցքը, բևեռները, միջորեսականներն ու հասարակածը, բայց զրանք յերկրագունդի վրա նշանակված չեն, մենք միայն յերեակայում ենք նրանց:

Աշխատանք.—Գնդակի միջով ճաղը նորից անցկացրեք: Գնդակն այնպես ըռնեցեք, վոր ճաղի մի ծայրն ուղղվի դեպի վեր, իսկ մյուսը դեպի ցած: Այդ ճաղը կլինի ձեր գնդակի առանցքը: Գնդակի այն տեղը, վորտեղով ճաղը դուրս ե գալիս, ընդունեցեք վորպես բևեռներ: Նշանակեք հյուսիսային և հարավային բևեռները:

Գծեցեք մի շրջագիծ, վոր համապատասխանի հասարակածին:

Գծեցեք մի միջորեսական:

Յեթե հասարակածով կամ միջորեսականով ձեր գունդը կիսեք, ի՞նչ կիսագնդը կտանաք:

Կիսագնդերի հարտեղ.—Գլոբուսի միջոցով մենք կարող ենք իմանալ, թե յերկրագնդի վրա ինչ ցամաքներ, ծովեր, գետեր, լեռներ կան: Բայց գլոբուսին նայելիս մենք միայն նրա մի յերեսն ենք տեսնում: Վորպեսզի գլոբուսի ամբողջ յերեսը միանգամից աեմնենք և իմանանք, թե բոլոր ցամաքներն ու ծովերը ի՞նչպես են դասավորված՝ լավ կլինեք, վոր գլոբուսը գլխավոր միջորեսականով կիսելինք և հետո արեւմտյան կիսագունդը պատին ջոկ կպցնեինք, իսկ արեվելյանը՝ ջոկ: Այս դեպքում մենք միանգամից կաեմնեյինք գլոբուսի ամբողջ յերեսը:

Ինչ վոր տեսնում ենք այդ կիսագնդերի վրա, մենք կարող ենք գծել և թղթի վրա: Այսպես, կողք-կողքի կնկարենք յերկու ըրջան: Ճախ շրջանի տակ կդրենք «արեւմտյան կիսագունդ», աջ շրջանի տակ «արեւելյան կիսագունդ»: Հետո այդ շրջանների մեջ կգծենք ցամաքներն ու ծովերն այնպես, ինչպես դասավորված են գլոբուսի վրա: Այս յեղանակով մենք կտանաք «կիսագնդերի քարտեզը»:

Գնդերի քարտեզը գործածության համար ավելի հարմար ե, քան գլոբուսը:

Կիսագնդերի քարտեզը յերբեմն գունավոր ե լինում: Այդ գեղագում ծովերը սովորաբար նկարում են կապույտ, դաշտավայրերը (ցածը հարթությունները)՝ կանաչ, բարձրավանդակները (բարձր հարթությունները)՝ բաց դարչինագույն, լեռները՝ դարչինագույն և այլն:

Կիսագնդերի քարտեզի վրա գտեք գլխավոր միջորեսականը և հասարակածը:

Աշխարհամասեր.—Յեթե ուշադրությամբ դիտեք գլոբուսը կամ կիսագնդերի քարտեզը, դուք կտեսնեք, վոր յերկրագնդի մեծ մասը ծածկված ե ջրով: Զուրը մոտ $2\frac{1}{2}$ անգամ ավելի մեծ տեղ ե բըռնում ցամաքից:

Ամբողջ ցամաքը բաղկացած ե հինգ աշխարհամասերից: Այդ աշխարհամասերն են՝ Ասիա, Յեվրոպա, Ամերիկա, Աֆրիկա յեվ Ավստրալիա:

Ասիան, Յեվրոպան և Աֆրիկան կպած են իրար և միասին վերցրած կոչվում են Արեվելյան մայր ցամաքը, վորովետե գտնվում են արեւելյան կիսագնդում: Ամերիկան կոչվում ե Արեվմոյան մայրցամաքը, իսկ Ավստրալիան՝ Հարավային:

Աշխարհամասերից ամենամեծն ե Ասիան, իսկ ամենափոքը՝ Ավստրալիան: Մենք ապրում ենք Ասիայում:

Աշխատանք.—Ասիան Յեվրոպայից բաժանվում ե Ուրալյան լեռներով, Ուրալ գետով, Կասպից ծովով, Կովկասյան լեռներով, Կոստանդնուպոլիսի և Թարգանելի նեղուցներով: Յույց տվեք:

Աֆրիկան Յեվրոպայից բաժանվում է Միջերկրական ծովով, իսկ Ասիայից Սուեզի պարանոցով (ջրանցքով) և Կարմիր ծովով: Յույց տվեք: Գտեք Խորհրդային Հայաստանի տեղը:

Ովկիանոսներ.—Յերկրագնդի ընդարձակ ջրերն ել ցամաքի նման բաժանվում են մի քանի շատ մեծ մասերի, վորոնք կոչվում են ովկիանոսներ: Ովկիանոսներն ել 5 հատ են.

1. Արևածյան ովկիանոս (Յեվրոպայի յեվ Ամերիկայի միջեվ):
2. Մեծ կամ Խաղաղ ովկիանոս (Ասիայի յեվ Ամերիկայի միջեվ):
3. Հնդկական ովկիանոս (Ասիայից հարավ, Աֆրիկայի յեվ Ավստրալիայի միջեվ):
4. Հյուս. Խառուցյալ ովկիանոս (Հյուս. Յեվենի շուրջը, Հյուս. Թեվոսային շրջանից դեպի Հյուսիս):

5. Հար. Սառ. ովկիանոս (հարավային քեվեռային շրջանից դեպի հարավ): Մի շարք գիտնականներ հետազոտելով Հար. Սառ. ովկիանոսը, գտան, վոր նրա մեծ մասը ցամաք է, և այժմ կոչվում են Անտարկտիդա:

Ովկիանոսներից ամենամեծն եւ Խաղաղ ովկիանոսը: Նա միայնակ ավելի մեծ տեղ եւ բռնում, քան ամբողջ ցամաքը: Բոլոր ովկիանոսները միացած են իրար հետ:

Աշխատանք.—Գիսագնդերի համր քարտեզի վրա ցամաքը ներկեց գեղին, իսկ ջուրը՝ կապույտ գույնով և ապա նշանակեցեք աշխամասերի և ովկիանոսների անունները: (Տես «Աշխարհագրական տետր», աշխատանք 1.)

Դժեցեք աշխարհամասերի և ովկիանոսների մեծության դիագրամը (տես «Աշխարհագրական տետր», աշխատանք 2):

Ովկիանոսի յեվ ցամաքի մասերը:—Ովկիանոսի ջուրը շարունակ հարփածում եւ ցամաքը, քանդում, մաշում այն. այդ պատճառով ծովափը սովորաբար կտրուված եւ լինում: Ովկիանոսի այն մասերը, վորոնք մտնում են ցամաքի մեջ, կոչվում են ծովեր և ծոցեր: Ջրի այն նեղ շերտը, վոր միացնում եւ ջրային յերկու տարածություն իրար հետ, կոչվում եւ նեղուց:

Յեփրոպայի քարտեզի վրա ցույց տվեք Ասլանայան ովկիանոսը, Զիբրալտարի նեղուցը և Միջերկրական ծովը: Աև ծովը վոր ովկիանոսի հետ և միանում: Աև ծովից Ասլանայան ովկիանոս դուրս դալու համար ի՞նչ նեղուցներով և ծովերով պետք եւ անցնել:

Ցամաքի այն մասը, վորը մտած եւ ծովի մեջ, կոչվում եւ թերակղի: Ցամաքի այն նեղ շերտը, վոր միացնում եւ յերկու ցամաք իրար հետ, կոչվում եւ պարանոց: Այն փոքր ցամաքները, վորոնք ամեն կողմից շրջապատված են ջրով, կոչվում են կղզիներ: Կղզիների խումբը կոչվում եւ արշիպելագ:

Ասիայի քարտեզի վրա ցույց տվեք Աև և Կասպից ծովերը. Փոքր-Ասիա, Արաբիա և Հնդկաստան թերակղիները. Ցելոն, Սումատրա, Յավա, Յապոնական և Սախալին կղզիները. Բերինգյան նեղուցը, վորով Ամերիկան և Ասիան բաժանվում են իրարից:

Ովկիանոսի հատակը:—Ովկիանոսների և ծովերի հատակին կան հարթություններ, լեռներ ու հովիտներ, բայց ավելի քիչ, քան ցամաքի վրա. Բացի այդ, նրանց կողերն այնպես ժայռոտ և ուղղաձիգ չեն, ինչպես ցամաքի լեռների լանջերն ու կողերը: Տեղ-տեղ ստոր-

ջըրյա բարձրությունները ջրի յերեսն են գուրս գալիս և կղզիներ կազմում:

Ովկիանոսների միջին խորությունն եւ մոտ $3\frac{1}{2}$ կիլոմետր: Ամենախոր տեղը գտնվում է Խաղաղ ովկիանոսում, Ֆիլիպպյան կղզներից արևելք, վորտեղ գտնվել են 9780 մետր խորություն: Այդ խորության մեջ կարող եւ թաղվել յերկրագնդի ամենաբարձր լեռու Եվերեսուը (8840 մետր):

Կարդացեք Կոլումբոսի, Մագելլանի և Կուկի ձանապարհորդությունները: Այս հոգվածները դուք կգտնեք «Աշխարհագրական զբույժներ» գրքույկի մեջ:

Կիսագնդերի քարտեզի վրա ցույց տվեք Կոլումբոսի, Կուկի և Մագելլանի անցած ձանապարհը:


ԵԵՐԱՐԱԳՆԳԻ ՊՏՏՎԵԼԸ ՅՈՒԹ ԱՌԱՆՑՔԻ ՇՈՒՐՁԸ

Աշխատանք.—Դասարանը մթնացրեք: Գլոբուլը գրեք սեղանին և ապա վառ մոմը պահեցեք գլոբուսից քիչ հեռու: Ամբողջ գլոբուլը լուսավորվում է:

Չեզանից մեկը թող գլոբուլը յուր առանցքի շուրջը պտտի: Նայեցեք աշխարհամասերին: Նրանք պտտվելու ժամանակ կամ լուսավոր կողմն են անցնում, կամ խավար: Պատկերացրեք, վոր մի մրջյուն նըստած և պտտվող գլոբուսի վրա: Նրա համար անընդհատ լույս կլինի:

(Այս փորձի համար, յեթե գլոբուլը չունեք, կարող եք վերցնել և ձեր գնդակը, վորի միջով ճաղ եւ անցնում):

Մենք գիտենք,
վոր ամեն առավոտ
արևը ծագում եւ ա-
րևելքում, ապա հետ-
արգինետե բարձրա-
նում եւ դեպի վեր
և նորից թեքվելով
գեպի հորիզոնը, յե-
րեկոյան ծածկվում
եւ արևմուտքում:
Նույն ձևով արևել-
քից գեպի արև-
մուտք շարժվում են
և աստղերը: Հին ժա-
մանակ մարդիկ կարծում եյին, թե իսկապես արևն ու աստղերը շարժ-



Նկ. 5. Գիշեր և ցերեկ (փոքր գունդը լուսին ե):

վում են յերկրի շուրջը, բայց XVI դարում նշանավոր գիտնական կոպերնիկոսը ապացուցեց, վոր արեն ու աստղերն անշարժ են, իսկ յերկրագունդը պտտվում է յուր առանցքի շուրջը, ինչպես գլոբուսը։ Այսպիսի առանցքը (ձող), ինչպիսին գլոբուսն ունի, յերկրագունդը չունի։ Յերկրագնդի առանցքը յերեակայական է, ինչպես պտտվող հոլինը։

Յերկրագունդը յուր առանցքի շուրջը մի պտույտ կատարում է 24 ժամում, այսինքն մեկ որում։ Պատվելու ժամանակ նա դեպի արեն և դարձնում կամ մի յերեսը կամ մյուսը։ Լուսավորված կողմը լինում է ցերեկ, իսկ մութ կողմը՝ զիշեր։ Յերբ Աստիայում յերեկ է լինում, նույն այդ միջոցին Ամերիկայում գիշեր է լինում։ Վորովնետե յերկրի հետ մենք ել ենք շարժվում, ուստի այդ շարժումը չենք նկատում։ Մեզ թվում ե, թե ցերեկն արեն և շարժվում, իսկ գիշերները՝ աստղերն ու լուսինը, ճիշտ այնպես, ինչպես յերկաթուղով գնալիս, յերբ վագնից դուրս ենք նայում, մեզ թվում ե, թե հեռագը սյուները, ծառերը շարժվում են, իսկ մենք անշարժ ենք։

Ուրեմն արեն ու աստղերը արենելից դեպի արեմուտք չեն շարժվում. յերկրի հետ միասին մենք ենք շարժվում արեվմուտքից դեպի արեվելք։

II. Յերկրի Յերեսը Փոփոխութ ՈՒՅՑԵՐԸ. ՅԵՐԿՐԱԳՆԴԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԽՆՉՊԵՍ Ե ԵՐԿՐԵ ՅԵՐԵՍԸ ՓՈՓՈԽՎԱՌՈՒՄ

Յերկրի յերեսը շարունակ քայլայվում է և փոփոխվում։ Բարձր սարերը հետզհետե մաշվում, փոքրանում են, հարթ տեղերով հոսող ջրերը խոր ձորեր են փորում, հսկայական ժայռերը փշրվում, ավաղ են զառնում և այլն։ Բայց այդ փոփոխություններն այնքան դանդաղ են կատարվում, վոր մենք սովորաբար չենք նկատում. մեզ թվում ե, թե մեր հայրենիքի ձորերն ու դաշտերը, լեռներն ու հովիտները միշտ ել յեղել են և այդպես ել կմնան։ Յույց տալու համար, վոր յերկրի յերեսը չափազանց դանդաղ և քայլայվում, մի որինակ բերենք։ Յենթագրենք, թե զյուղացին մի կալից 60 փութ ցորեն և վերցրել և այդ ցորենը թեղել ե կալում։ Մի յերկու մըրջուն ել անտեսանելի կերպով գալիս են ու հատիկները մեկ-մեկ կրում իրենց բունը։ Յեթե մի քանի որ ցորենը մնա կալում և այդ-

մրջյունները դիշեր-ցերեկ իրենց համար ցորեն կրեն, գյուղացին ամենեին չի նկատի, վոր յուր ցորենի թեղը փոքրանում է, ձիշտ այդպիսի յերեսույթ և տեղի ունենում և բարձր սարի վրա։ Գարունը բացվելուն պես Արագածի վրայի ձյունը հալվում է և գոյացնում բազմաթիվ առվակներ, վորոնք քչքչալով սարի լանջից ցած են հոսում և իրենց հետ տիղմ ու ավագ իջեցնում։ Սակայն Արագածի մաշվելը, փոքրանալը մեր կարճատե կյանքի ընթացքում չենք նկատում։ Բայց վորովնետե այդ առվակները գոյանում են ամեն տարի, դարեր շարունակ, հազարավոր տարիներ, ուստի պարզ է, վոր սարը վերջ ի վերջո պետք է փոքրանա։

Այժմ տեսնենք, թե ինչ ույժեր են, վոր յերկրի յերեսը բայցայում են։

Այդ ույժերից մեկը արեվի տաքությունն է։ Դուք գիտեք, վոր ամեն մի մարմին տաքությունից ընդարձակվում է, իսկ ցրտությունից սեղմվում, փոքրանում է։ Յերեկն արեի ճառագայթներից ժայռերը, քարակոշերը տաքանում են։ Այդ ժամանակ նրանց յերեսի շերտը տաքությունից ընդարձակվում է, իսկ ներսը մնում է սառը։ Գիշերը ցրտից ժայռի յերեսի շերտը սեղմվում է, փոքրանում։ Ըստ դարձակվելուց և սեղմվելուց ժայռերի վրա ճեղքեր են գոյանում։

Ճուրն ել յուր հերթին ժայռի ճեղքերն ավելի մեծացնում է։ Դուք յերեկի տեսած կամ լսած կլինեք, վոր կավե կժերը ձմեռը, սառնամանիքներին ճեղքվում են։ Դրա պատճառն այն է, վոր ջուրը սառուց կտրելիս ընդարձակվում է և աշխատում է ավելի մեծ տեղ բռնել։ Զմեռները ժայռի ճեղքերում ջուրը սառչում է և ընդարձակվելով փշրում ժայռը։

Յեթե ժայռի կողերը շատ թեք են, այն գեպքում նրա յերեսից պոկված քարերը ցած են թափվում և կազմում քարակույտեր։ Իսկ յեթե քարային զանգվածների յերեսը հորիզոնական է կամ անշան թեքություն ունի, այն գեպքում քարի փշրանքները մնում են աեղն ու տեղը և, հետզհետե ավելի մանրանալով, դառնում ավաղ, փոշի։ Քարերը քայլայվում են նաև ողից։ Ողի մեջ միշտ կան թթվածին, ածխաթթու գաղ և ջրային գոլորշիներ, վորոնք ազգում են քարերի վրա և փոփոխում նրանց։ Այսպիսով լեռնային տեսակները ողի, տաքության ու ցրտի, արեի ճառագայթների ազդեցութան տակ շարունակ քայլայվում են և դրանից յերկրի յերեսը ծածկվում է փխրուն շերտով։

վում են յերկրի շուրջը, բայց XVI դարում նշանավոր գիտնական կոպերնիկոսը ապացուցեց, վոր արևն ու աստղերն անշարժ են, իսկ յերկրագունդը պտտվում է յուր առանցքի շուրջը, ինչպես գլոբուսը։ Անպիսի առանցք (ձող), ինչպիսին գլոբուսն ունի, յերկրագունդը չունի։ Յերկրագնդի առանցքը յերեակայական է, ինչպես պտտվող հոլինը։

Յերկրագունդը յուր առանցքի շուրջը մի պտույտ կատարում է 24 ժամում, այսինքն մեկ որում։ Պտտվելու ժամանակ նա դեպի արևն է դարձնում կամ մի յերեսը կամ մյուսը։ Լուսավորված կողմը լինում է ցերեկ, իսկ մութ կողմը՝ զիշեր։ Յերբ Ասիայում ցերեկ է լինում, նույն այդ միջոցին Ամերիկայում զիշեր է լինում։ Վրովհետեւ յերկրի հետ մենք ել ենք շարժվում, ուստի այդ շարժվումը չենք նկատում։ Մեզ թվում ե, թե ցերեկն արևն է շարժվում, իսկ զիշերները՝ աստղերն ու լուսինը, ճիշտ այսպես, ինչպես յերկաթուղով գնալիս, յերբ վագոնից դուրս ենք նայում, մեզ թվում ե, թե հեռագրի սյուները, ծառերը շարժվում են, իսկ մենք անշարժ ենք։

Ուրեմն արևն ու աստղերը արևելքից դեպի արևմուտք չեն շարժվում. յերկրի հետ միասին մենք ենք շարժվում արեվմուտքից դեպի արևելք։

II. Յերկրի Յերեսը Փոփոխող ՈՒՅԺԵՐԸ. ՅԵՐԿՐԱԳՆԴԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԵՆՉՊԵՍ Ե ՅԵՐԿՐԻ ՅԵՐԵՍԸ ՓՈՓՈԽՈՎՈՒՄ

Յերկրի յերեսը շարունակ քայլայվում է և փոփոխվում։ Բարձր սարերը հետզհետեւ մաշվում, փոքրանում են, հարթ տեղերով հոսող ջրերը խոր ձորեր են փորում, հսկայական ժայռերը փշրվում, ավագ են դառնում և այլն։ Բայց այդ փոփոխություններն այնքան դանդաղ են կատարվում, վոր մենք սովորաբար չենք նկատում։ Մեզ թվում ե, թե մեր հայրենիքի ձորերն ու դաշտերը, լեռներն ու հովիտները միշտ ել յեղել են և այդպես ել կմնան։ Յույց տալու համար, վոր յերկրի յերեսը չափազանց դանդաղ է քայլայվում, մի որինակ բերենք։ Յենթագրենք, թե գյուղացին մի կալից 60 փութ ցորեն է վեցըրել և այդ ցորենը թեղել է կալում։ Մի յերկու մըրչյուն ել անտեսանելի կերպով գալիս են ու հատիկները մեկ-մեկ կրում իրենց բունը։ Յեթե մի քանի որ ցորենը մնա կալում և այդ-

մըջյունները զիշեր-ցերեկ իրենց համար ցորեն կրեն, գյուղացին ամենեին չի նկատի, վոր յուր ցորենի թեղը փոքրանում է։ Ճիշտ այդպիսի յերեսույթ է տեղի ունենում և բարձր սարի վրա։ Գարունը բացվելուն պես Արագածի վրայի ձյունը հալվում է և գոյացնում բազմաթիվ առվակներ, վորոնք քչչալով սարի լանջից ցած են հոսում և իրենց հետ տիզմ ու ավագ իջեցնում։ Սակայն Արագածի մաշվելը, փոքրանալը մեր կարձատե կյանքի ընթացքում չենք նկատում։ Բայց վորովհետև այդ առվակները գոյանում են ամեն տարի, գարեր շարունակ, հազարավոր տարիներ, ուստի պարզ է, վոր սարը վերջ ի վերջո պետք է փոքրանա։

Այժմ տեսնենք, թե ինչ ույժեր են, վոր յերկրի յերեսը բայցայում են։

Այդ ույժերից մեկը արեվի տաքությունն է։ Դուք գիտեք, վոր ամեն մի մարմին տաքությունից ընդարձակվում է, իսկ ցրտությունից սեղմվում, փոքրանում է։ Յերեկն արևի ճառագայթներից ժայռը, քարակոշերը տաքանում են։ Այդ ժամանակ նրանց յերեսի շերտը տաքությունից ընդարձակվում է, իսկ ներսը մնում է սառը։ Գիշերը ցրտից ժայռի յերեսի շերտը սեղմվում է, փոքրանում։ Ընդարձակվելուց և սեղմվելուց ժայռերի վրա ճեղքեր են գոյանում։

Ճուրն ել յուր հերթին ժայռի ճեղքերն ավելի մեծացնում ե։ Դուք յերեկի տեսած կամ լսած կիխնեք, վոր կավե կժերը ձմեռը, սառնամանիքներին ճեղքվում են։ Դրա պատճառն այն է, վոր ջուրը սառուց կտրելիս ընդարձակվում է և աշխատում է ավելի մեծ տեղ բռնել։ Զմեռները ժայռի ճեղքերում ջուրը սառչում է և ընդարձակվելով վրում ժայռը։

Յեթե ժայռի կողերը շատ թեք են, այն դեպքում նրա յերեսից պոկած քարերը ցած են թափվում և կազմում քարակոշեր։ Իսկ յեթե քարային զանգվածների յերեսը հորիզոնական է կամ անշահան թեքություն ունի, այն դեպքում քարի փշրանքները մնում են աեղն ու տեղը և, հետզհետեւ ավելի մանրանալով, դառնում ավագ, փոշի։ Քարերը քայլայվում են նաև ողից։ Ողի մեջ միշտ կան թթվածին, ածխաթթու գաղ և ջրային գոլորշիներ, վորոնք ազգում են քարերի վրա և փոփոխում նրանց։ Այսպիսով լեռնային տեսակները ոդի, տաքության ու ցրտի, արևի ճառագայթների ազդեցութան տակ շարունակ քայլայվում են և զրանից յերկրի յերեսը ծածկվում է փխրուն շերտով։

ԳԵՏԵՐԻ աշխատանքը.—ՅԵՐԿՐԻ յերեսին մեծ փոփոխություններ առաջանում են և գետերից։ ՅԵՄԵ դիտեք վորեւ գետ, գուղկտեմնեք նրա յեզերին և ջրի մեջ քարերի մեծ ու փոքր կտորներ, վորոնք խճաքարեր են կոչվում. շատ մանրերը կազմում են ավազ։ Այդ խճաքարերը այնքան հարթ են, վոր կարծես վարպետի ձեռքով հղկված են։ Այդ վարպետը հենց ինքը գետն ե։ Վարպարած ժամանակ գետի ույժը սոսկալի մեծանում ե։ Այդ ժամանակ դուք ջրի միջից լսում եք ինչ վոր խուլ ձայներ, Դա առաջանում է նրանից, վոր գետը յուր հատակով զլորում է զանազան քարեր, վորոնք իրար զարկվելով խուլ ձայներ են արձակում։ Այդ քարերն իրար քսվելով հղկվում են, հարթվում։ Ամեն անգամ, յերբ գետը վարում է, նրանք ավելի ու ավելի յեն փշրվում և վերջը դառնում ավազ։ Թեթև փշրանքները, ավազը և տիղմը գետի հոսանքով տարվում են դեպի ծով։



Նկ. 6. Լեռնային գետ։ Ավերին թափված քարերը գետն և բարձր տեղից իջեցրել

Գետը վոչ միայն քարերը մանրում, տեղափոխում է, այլ և մեծ ույժով քանդում է յուր հատակը և ափերը։ Ժամանակի ընթացքում նա գոյացնում է խոր ձորեր և հովտներ։



Նկ. 7. Գետն իր վտակներով հովիտ և առաջացնում։

ԵՐԱԿՈՒՐԱՀԱ.—Ռւղեռքել մոտակա ձորը և գիտել գետի կատարած փոփոխությունները։ 1. Դիտեցեք գետափի ժայռերը. ճեղքեր կմնա։ 2. Ժայռի տակ քարակույտեր կմնա. Բնչպես են նրանք առաջացել։ Յ.


Համեմատեցեք այդ քարերը գետի միջի քարերի հետ. ինչով են նրանք իրարից տարբերվում։ 4. Դիտեցեք խճաքարերի և ավազի մակերեսութը. հարթ են. 5. Քարերից կազմեցեք մի այնպիսի հավաքածու, վորի մեջ լինեն գետի չնկված կտորներ, գետի մեջ հղկված կտորներ, խճաքարեր և ավազ։

Գետի մեջ յերեմն պատահում են շատ մեծ քարեր, վորոնց մեծ մասը ջրից դուրս ե, բայց և այնպիս նրանց յերեսը հղկված ե։ Ի՞նչն է պատճառը։

Ծովի աշխատանքը.—Քամուց կոթորդից ծովը ալեկոծվում է։ Ալիքները հրուկայական ույժով զարկվում են ծովի ափերին և մաշում նրանց։ Քայլայումը մեծ չափերի յեն հասնում, մանավանդ, ժայռոտ ափի մոտ։ ՅԵՄԵ ծովեղը բաղկացած է հորիզոնական շերտերից, այն դեպքում ալիքները ժայռի ստորին մասերը բայցայում են, իսկ վերին մասերը մնում են ողում կախված։ Այդ կախված քարաշերտերը ժամանակի ընթացքում հենց իրենց ծանրությունից քանզիվում են, և քարի կտորները կուտակվում են ժայռի տակ։

Ալիքների ույժից յերեմն ամբողջ կղզիներ մաշվում անհետանում են։ ՅԵՎՐՈՊԱՅԻ ափերից քիչ հեռու, ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ծովում մի կղզի կա՝ Հելգոլանդ անունով։ Այդ կղզին վերջին հինգհարյուր տարվա ընթացքում 4 անգամ փոքրացել ե։ Նա կամաց հալվում, մաշվում է, և կդա մի ժամանակ, վոր նրա տեղը ծովի ջուրը կը ընի։

Ծովափերին թափված քարերն իրենց հերթին ավելի ևս մանրանում են, Ալիքները շարունակ նրանց զարկում են իրար և փշրում։



Նկ. 8. Հոսող ջրերից բարձրավանդակը խորուրուրող և դառնում։

ստացվում են ավագ և կավ։ Ծանր ավազը նստում ե ծովափերին մոտ, իսկ կավս ավելի հեռու։

Յածր ափերի մոտ ծովի ուրիշ կերպ ե ազդում։ Այս տեղ ալիքները ծովից շարունակ ավազը դուրս են նետում։ Յերբ այդ ավազը չորանում ե, ծովից փչող քամին կամաց-կամաց ավազի հատիկները պլորում ե դեպի ցամաքի ներսը։ Յեթե ճանապարհին ավազը վորեւ արգելքի յե հանդիպում, այստեղ նա կուտակ-



Նկ. 9. Ծովի ալիքները փշում են ժայռերը։

վում ե և ավազաթմբեր գոյացնում։ Ավազը շատ դանդաղ ե շարժվում. ամբողջ տարվա ընթացքում նա հազիվ մի քանի մետր ե տեղափոխվում, բայց տամնյակ տարիների ընթացքում նա կարող ե այնքան շարժվել, վոր ճանապարհին կծածկի մշակած արտեր, գյուղեր։ Ավազի արշավանքից ազատվելու համար, մարդիկ նրանց վրա խոտ են ցանում և ծառեր տնկում. բույսերն իրենց արմատներով ամրացնում են ավազը։

Կարգացեք «Ծովի ալիքներն ու նրանց ույժը» («Աշխահազր. Պուլյաներ»)։

ԵՐԵՍԱՎՈՐ ԼԵՇՆԱՅԻՆ ՏԵՍԱԿԱՆԻՐ

Աշխատանք. — Վերցրեք մի բաժակ ջուր։ Նրա մեջ ածեցեք ավազիսան կավ և ապա ջուրը խառնեցեք։ Դրեք բաժակը սեղանին, վորոշ ժամանակից հետո ջուրը կլարպի։ Ի՞նչ տեղի ունեցավ։ Ի՞նչու ավազը նատել է ատկը, իսկ կավը վրայից։

Են ավազն ու տիղմը, վոր ստացվում ե ծովափերի քայքայումից կամ գետերը տանում են դեպի ծով, այստեղ ծովի հատակին շերտ-շերտ նստում են ինչպես ձեր փորձի ժամանակ ավազն ու կավը նստեցին բաժակի հատակին։ Ժամանակի ընթացքում նրանց առանձին մասնիկները կպչում են իրար, վերին շերտերը ձնշում են ստորիններին, ճնշման տակ շերտերը խտանում և պնդանում են։ Այսպիսով ավազից առաջ ե դալիս. ավազաքար, կավից՝ կավային թերթաքար և այլն։

Ծովերում և ովկիանուներում ապրում են շատ կենդանիներ, վորոնք ունեն կրաքարային պատյաններ։ Կենդանիների մեռնելուց հետո այդ պատյանները (խեցիները) կուտակվում են ծովի հատակին, և դրանցից գոյանում են զանազան լեռնային տեսակներ։ Մի քանի լեռնային տեսակներ, որինակ կավիճը և կրաքարը, կաղմված են բացառապես կենդանական մնացորդներից։


Ավազաքարերը, կրաքարերը, կավաքարերը և այլն, վորոնք գոյացել են ջրի տակը նստելու հետևանքով, կոչվում են շերտավոր (խավազոր) լեռնային տեսակներ։

Բայց ի՞նչպես ե, վոր այս շերտերն այժմ գտնվում են ցամաքում։



Նկ. 10. Գետաքերանում նոր ցամաք և գոյանում։

Մի քանի լեռնային տեսակներ, որինակ կավիճը և կրաքարը, կաղմված են բացառապես կենդանական մնացորդներից։



Նկ. 11. Յերկը շերտերը

Ծովի հատակը տեղ-տեղ դանդաղորեն բարձրանում է, և այն ժամանակ նրա վրայի շերտերը յերկը յերեսն են դուրս գալիս։ Բոլոր այն տեղերը, ուր այժմ մենք գտնում են շերտավոր լեռնային տեսակներ, առաջ ծովով ծածկված են յեղել։ Այդ մենք իմանում ենք շերտերի մեջ մնացած ծովային կենդանիների կմախքներից, պատյաններից և այլն։

Ծովից բարձրացած շերտերը կարող են կրկին ծածկվել ծովի տակ։ Այդ բանը կարող եր կրկնվել շատ անգամ, և շերտերը հետո կբարդանային։

Հենց այժմ ել մեր աչքի առաջ ծովյեղերքը դանդաղորեն փոփոխվում են: Ֆինլանդիայում մի քաղաք կա, վոր կոչվում են Վաղա: Նա մի քանի հարյուր տարի առաջ գտնվում եր ուղիղ ծովափին, իսկ այժմ ծովափից մի քանի կիլոմետր հեռու են գտնվում: Նշանակում են ծովափը բարձրացել են: Նույնը նկատվում են Սկանդինավյան թերակղզու շատ տեղերում: Ուրիշ տեղերում հակառակ յերկույթն են կատարվում: Շվեդիայի Մալմե կաղաքը կամաց կամաց ջրով ծածկվում են. շատ հին շենքեր այժմ ծովի մեջ են գտնվում:

Կարդացեք «Ծովը վորպես յերկրի կեղեց կազմակերպող», «Արմատուանիներ», «Կյանքը ծովի խորքում» հողվածները («Աշխարհագր. զբույցներ»):

ՅԵՐԿՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Հանքանորեր փորելիս մարդիկ նկատում են, վոր վորքան դեպի խորն են գնում, այնքան ջերմության աստիճանը բարձրանում են: Մոտ 2 կիլոմետր խորության մեջ այն աստիճան տաք են, վոր բանվորները դժվարանում են աշխատել: Վոր յերկրի խորքերում շատ տաք են, այդ յերկում են նրանից, վոր յերկրագնդի զանազան տեղերում (Թիֆլիսում, Պյատիգորսկում և այլն) գետնից բղինում են տաք աղբյուրներ: Այդ աղբյուրների ջրերը յերկրի յերեսից գեղի խորքերն են ծծվում սառը վիճակում, բայց հետո խոր շերտերում տաքանում են, վորովհետև այստեղ շատ տաք են:

Յենթաղբում են, վոր մոտ 70 կիլոմետր խորության մեջ այն աստիճան տաք պետք են լինի, վոր յեթե մենք այդ աստիճանի տաքություն ստանանք յերկրի յերեսին, ամեն տեսակ նյութ կարող ենք հալել: Գիտնականների կարծիքով յերկրագնդի կենտրոնում պետք են, վոր 100,000 աստիճան ջերմություն լինի: Բայց թե նյութերը ինչ վիճակում են գտնվում յերկրի ներսը, այդ մեզ հաստատապես հայտնի չեն: Գիտնականներից վորմանք ընդունում են, վոր յերկրագնդի միջուկը հեղուկ վիճակում են գտնվում, վորմանց ասելով գաղային



Նկ. 12. Քարի կտոր ծով. կենդանիների մասցություն:


վիճակում, իսկ վորմանց ասելով ել՝ պինդ: Մի բան միայն անկասկած են, վոր յերկրի ներսը սաստիկ տաք են:

Յենթաղբում են, վոր յերկրը մի ժամանակ ամբողջովին հալված վիճակում են յեղել և փայլելիս, ինչպես արել. բայց հետագայում նա կամաց-կամաց սառել են յերեսը ծածկվել կեղեվով: Այդ կեղեց ծածկում են յերկրի միջուկն այնպես, ինչպես ձմերուկի կեղեց ծածկում են յուր միջուկը: Ողի, ջրի, տաքության ու ցրտի աղղեցությունից յերկրի կեղեց քայլայվում են, վորմոխվում և վերջի վերջո ընդունում յուր այսորվա ձեր:

I



II



32508-61

Նկ. 13. I. Յերկրի կազմությունը: II. Յերկրի միջուկը սառչելու ժամանակ սեղմկում են: Կեղեցի և միջուկի միջև գատարկություն և զոյանում:


Լեռների ծագումը.— Յերկրագնդի շիկացած միջուկը հետզհետե հովանում են և սեղմկում, փոքրանում: Սառչելուց միջուկի և կեղեցի արանքում պետք են գատարկություն զոյանար, բայց կեղեն իր ծանրությունից մի քանի տեղերում իջնում են, և զրանից յերկրի յերեսի վրա տուածանում են անհարթություններ՝ դաշտավայրեր և բարձրավանդակներ (Նկ. 13 և 14):

Ուրիշ տեղերում յերկրի կեղեցի մեջ ծալքեր են գոյանում: Դրանք ել այսպես են առաջանում: Մենք գիտենք, վոր յերկրի կեղեց բաղկացած է զանազան շերտերից: Վերցնենք մահուղի մի քանի կտոր և իրար վրա դարսելուց հետո կողքից ձնշենք: Մենք կտեսնենք, վոր այդ կտորները կուչ կզան և ծալքեր կգոյացնեն: Ճիշտ այդպես ել յերկրի կեղեց զանազան տեղերում կողքից ձնշվում են. շերտերը տեղադրանում են, լեռնաշղթաներ գոյացնում, իսկ տեղադրել ել իջնում, հովիտներ տուածանում: Յերկրագնդի բարձր լեռների մեջ

2



մասն այդ յեղանակով եւ գոյացել: Բայց նրանք առաջացել են զանազան ժամանակներում: Հին լեռները նորերից ավելի շատ են քայլայվել, այդ պատճառով ելքավելի ցածր են: Ծալքավոր լեռներ են կովկասյան լեռնաշղթան, Ալպյան, Հիմալայան լեռները և այլն:



Նկ. 14. III Յերկրի կեղեռում ձեղքեր են գոյանում: IV Ծանրությունից կեղեռ տեղաբեր նստում եւ լեռներ գոյացնում:

Հրաբուխ.—Յերկրի ներսի տաքության ամենալավ՝ ապացույցը հրաբուխներն են: Հրաբուխն այնպիսի մի սար ե, վորի գագաթից յերբեմն ջրային գոլորշիներ, զանազան գազեր յել քարեր են դուրս գալիս, դուրս ե վիժում լավա, այսինքն հալված լեռնայինտեսակներ: Յերկրագնդի վրա հրաբուխներ շատ կան: Դրանցից նշանավոր ե Վեզուվը, վոր գտնվում է Յեվոպայի հարավում, Ապենինյան թերակղզու վրա:

Սովորաբար ժայթքումից առաջ լսվում ե ստորյերկրյա դղրդյուն:

Նկ. 15. Ծալքավոր լեռներ յերկրագնդի վրա Հրաբուխի շուրջը յերկիրը շարժվում է: Քիչ հետո գագաթին յերեռում ե ջրային գոլորշի,

վոր սյունի նման բարձրանում ե վերև և ահագին սև ամպ գոյացնում: Գոլորշիներն այնպիսի ուժով են ժայթքում, վոր իրենց հետ բարձրացնում են լավայի կտորներ և քարեր: Այդ քարերն ու լավայի սառած կտորները թափվում են սարի լանջերին:

Զրային գոլորշիների ժայթքումի միջոցին բարձրանում են նաև լավայի մանրիկ կաթիլներ, վոր ոգում պնդանում, փոշի յեն դառնում: Այդ փոշին կոչվում ե հրաբխային մոխիր: Հրաբխային մոխիրը յերբեմն խառնվում ե ջրային գոլորշիների հետ: Յերբ այդ գոլորշիները սառչում են ու անձրև գոյացնում, մոխիրն ու ջուրը թափվում են գետին իբրև ցեխ և ծածկում անտառներ, դաշտեր, յերբեմն զյուղեր ու քաղաքներ: Այդպիսի ցեխի տակ Ք. ծ. ա 79 թ. կորան Հերկուլանում և Պոմպեյ քաղաքները:

Վերջը սարի գագաթին յերեսում ե լավան. վոր հրեղեն գետի նման գանգաղորեն ցած ե հոսում սարի լանջերով և վերջը պնդանով քար կտրում:

Այն հրաբուխները, վորոնք այլևս չեն գործում, կոչվում են հանգած հրաբուխներ, որինակ՝ Մասիսը, Արագածը, Կագբեկը և այլն:



Նկ. 16. Վեզուվը գործում ե:

Հայաստանի հրաբուխները: Վեզուվի լավայից և մոխրից գոյացել են մի քանի տեսակ քարեր, վորոցից շատ կան Հայաստանում: Մասիսն ու Արագածը բաղկացած են այդպիսի քարերից: Հայա-

տանի այն սև քարը, վոր գործ ե ածվում շենքերի համար, նույնպես լավայից ե գոյացել: Բոլոր այն քարերը, վորոնք լավայից են առաջ յեկել, կոչվում են հրաբխային քարեր: Նրանց մի տեսակը կոչվում ե բազալտ, մյուսը՝ արախիտ, յերրորդը՝ անդեղիտ և այլն, իսկ այն քարը, վոր մոխրից ե գոյացել, կոչվում ե հրաբխային տուֆ:

Յեթե Մասիսը և Արագածը բաղկացած են այսպիսի քարերից, վորպիսին ստացվել ե վեղուվի և ուրիշ գործող հրաբուխների լավայից և մոխրից, պարզ ե, վոր այս սարերն ել հրաբուխներ են: սակայն նրանք այժմ այլևս չեն գործում: Նրանք հանգած հրաբուխներ են:

Հայաստանում հանգած հրաբուխներ շատ կան: Հրաբխի գործունեյությունից այստեղ գոյացել են վոչ միայն Արագածը և ուրիշ բարձր լեռներ, այլ և ընդարձակ բարձրավանդակներ: Ղարաբաղի, Սևանի, Շիրակի բարձրավանդակները առաջացել են մոտակա հրաբխային լեռներից վիճած լավայից, վոր պնդանալով ծածկել ե այդ տեղերը հրաբխային քարի ծածկոցով: Գետերը գարերի լնթացքում ձեղքել են այդ քարե ծածկոցը և գոյացը լիոր-խոր ձորեր, վորոնց յերկու կողմերով բարձրանում են հսկայական հաստությամբ ժայռեր: Այդպիսի ձորերով են հոսում Ախուրյանը, Զորագետը և այլն:

Յերկրածագ. — Յերկրի կեղելը յերբեմն ստորյերկրյա հարվածներից ցնցվում է: ասում ենք յերկրաշարժ ե տեղի ունենում: Յերկրաշարժը լինում է թույլ և ուժեղ: Ուժեղ յերկրաշարժի ժամանակ առարկաները, տները, ծառերը որորվում են, իսկ յեթե յերկրաշարժը շատ ավելի ուժեղ ե լինում, քանդվում են տներ և այլ շենքեր, յերկրի կեղելը ճաքեր ե տալիս, լեռներում ժայռեր են փլում, աղբյուրները փոխում են իրենց ուղղությունը և այլն:

Յերկրաշարժն ավելի հաճախ տեղի յե ունենում լեռնոտ յերկր-



Նկ. 17. Հրաբխի խառնարանը (Կըտակը)

։ Ներում: Անզրկովկասում յերկրաշարժը հաճախ կրկնվում ե Ախալքալաքի և Գորու շրջաններում:

Կարդացեք՝ «Նոր կղզիներ և լեռներ», «Վեղուվի ժայթքումը», «Պոմպեյի ավերակներում», «Կործանված քաղաքներ» հոդվածները («Աշխ. դրույցներ»):


III. ՅԵՐԿՐԱԳՆԴԻ ՏՈՒԲԱՆՈՒԾԸ

ԵԵՐԿՐԵ ՇԱՐԺ-ՈՒՄԸ ԱՐԵՎԻ ՇՈՒՐՅԸ

Աշխատանք. — Դասարանը մթնացրեք: Վառ մոմը դրեք սեղանին: Չեղանից մեկը թող վերցնի գլոբուսը, անդադար առանցքի շուրջը պտտեցնի և միաժամանակ շրջան անի մոմի շուրջը: Գլոբուսն այժմ յերկու շրջան և անում. նա և մոմի շուրջն ե պտտվում և առանցքի:

Յերկրագունդն ել պտտվում ե արևի շուրջը, ինչպես զորբուսը մոմի շուրջը: Նա պտտվելով յուր առանցքի շուրջը 24 ժամում, միաժամանակ առաջ ե շարժվում և պտույտ անում արևի շուրջը: Յերկրագունդը արևի շուրջը մի պտույտ կատարում ե 365 որում և 6 ժամում, այսինքն մեկ տարում:

Արևը մի հսկայական գունդ է: Նա յերկրագնդից մեկ միլիոն յերեք հարյուր հազար անգամ մեծ է, բայց փոքր ե յերեսում, վորովհետև 150 միլիոն կիլոմետր (140 միլիոն վերստ) հեռու ե գտնվում: Առանց արևի յերկրի վրա ծովերը չեյին գոլորշիանա, վոչ քամիներու գետեր կլինեյին և վոչ ել կենդանիներ ու բույսեր:



Նկ. 18. Յերկրի տարեկան շարժումը

Յերկրին արևի շուրջն ալնպես ե պտտվում, վոր առանցքը ձաւապարհի նկատմամբ թեք ե մնում, այդ պատճառով նյուսիսային և

տանի այն սկ քարը, վոր գործ ե ածվում շենքերի համար, նույնպես լավայից ե զոյացել: Բոլոր այն քարերը, վորոնք լավայից են առաջ յեկել, կոչվում են հրաբխային քարեր: Նրանց մի տեսակը կոչվում ե բաղալտ, մյուսը՝ արախիտ, յերրորդը՝ անդեղիտ և այլն, իսկ այն քարը, վոր մոխրից ե զոյացել, կոչվում ե հրաբխային տուփ:

Յեթե Մասիսը և Արագածը բաղկացած են այնպիսի քարերից, վորպիսին ստացվել ե վեղուվի և ուրիշ գործող հրաբուխների լավայից և մոխրից, պարզ ե, վոր այս սարերն ել հրաբուխներ են, սակայն նրանք այժմ այլևս չեն գործում: Նրանք հանգած հրաբուխներ են:

Հայաստանում հանգած հրաբուխներ շատ կան: Հրաբխի գործունեյությունից այստեղ զոյացել են վոչ միայն Արագածը և ուրիշ բարձր լեռներ, այլ և ընդարձակ բարձրավանդակներ:

Դարաբաղի, Սևանի, Շիրակի բարձրավանդակները առաջացել են մոտակա հրաբխային լեռներից վիճած լավայից, վոր սնդանալով ծածկել ե այդ տեղերը հրաբխային քարի ծածկոցով: Գետերը դարերի ընթացքում ձեղքել են այդ քարե ծածկոցը և զոյացը լիոր-խոր ձորեր, վորոնց յերկու կողմերով բարձրանում են հսկայական հաստությամբ ժայռեր: Այդպիսի ձորերով են հոսում Ախուրյանը, Զորագետը և այլն:

Յերկրաշարժ.—Յերկրի կեղերը յերբեմն ստորյերկրյա հարվածներից ցնցվում են, ասում ենք յերկրաշարժ և տեղի ունենում: Յերկրաշարժը լինում է թույլ և ուժեղ: Ուժեղ յերկրաշարժի ժամանակ առարկաները, տները, ծառերը որորվում են, իսկ յեթե յերկրաշարժը շատ ավելի ուժեղ է լինում, քանդվում են տներ և այլ շենքեր, յերկրի կեղեր ճաքեր ե տալիս, լեռներում ժայռեր են փլում, աղբյուրները փոխում են իրենց ուղղությունը և այլն:

Յերկրաշարժն ավելի հաճախ տեղի յե ունենում լեռնոտ յերկր-



Նկ. 17. Հրաբխի խանարանը (Կըտտերը)

ներում: Անդրկովկասում յերկրաշարժը հաճախ կրկնվում է Ախալքալաքի և Գորու շրջաններում:

Կարդացեր՝ «Եոր կղզիներ և լեռներ», «Վեգուվի ժայթքումը», «Պոմպեյի ավերակներում», «Կործանված քաղաքներ» հոդվածները («Աշխ. զրոյցներ»):


III. ՅԵՐԿՐԱԳՆԻՒԹԻ ՏՈՒՔԱՆՈԼԸ

ԵԵՐԿՐԵ ՇԱՐԺԱԿԱՆ ԱՐԵՎԱ ՇՈՒՐՋԸ

Աշխատանք.—Դասարանը մթնացրեք: Վառ մոմը դրեք սեղանին: Զեղանից մեկը թող վերցնի գլոբուսը, անդադար առանցքի շուրջը պտտեցնի և միաժամանակ շրջան անի մոմի շուրջը: Գլոբուսն այժմ յերկու շրջան և անում: Նա և մոմի շուրջն ե պտտվում և առանցքի:

Յերկրագունդն ել պտտվում ե արևի շուրջը, ինչպես գլոբուսը մոմի շուրջը: Նա պտտվելով յուր առանցքի շուրջը 24 ժամում, միաժամանակ առաջ ե շարժվում և պտույտ անում արևի շուրջը: Յերկրագունդը արևի շուրջը մի պտույտ կատարում ե 365 որում և 6 ժամում, այսինքն մեկ տարում:

Արևը մի հսկայական գունդ է: Նա յերկրագնդից մեկ միլիոն յերեք հարյուր հազար անգամ մեծ է, բայց փոքր է յերկում, վորովհետև 150 միլիոն կիլոմետր (140 միլիոն վերստ) հեռու ե գտնվում: Առանց արևի յերկրի վրա ծովերը չեյին գոլորշիանա, վոչ քամիներու գետեր կլինեյին և վոչ ել կենդանիներ ու բույսեր:




Նկ. 18. Յերկրի տարեկան շարժումը

Յերկրին արևի շուրջն այնպես ե պտտվում, վոր առանցքը ճամապարհի նկատմամբ թեք է մնում, այդ պատճառով հյուսիսային և

հարավային կիսագնդերը հավասարապես չեն տաքանում: Յերբ հյուսիսային կիսագունդը հարավայինից ավելի յէ տաքանում, այնտեղ ամառ ե լինում, իսկ հարավային կիսագնդում այդ միջոցին՝ ձմեռ: Իսկ յերբ յերկու կիսագնդերն ել հավասար են տաքանում, լինում ե գարուն կամ աշուն:

Ի՞նչն ե պատճառը, վոր յերկրագեղի վրա կան տաք յեվ ցուց յերկբեր.—Մեր յերկրում ամառը տաք ե ձմեռվանից: Ամառը ցերեկը յերկար ե, ուրեմն արեն ել յերկար ժամանակ ե տաքացնում. բացի այդ, ամառն արել կեսորին ավելի բարձրից ե տաքացնում, իսկ ձմեռը՝ ցածից: Բարձրից ընկնող ճառագայթներն ավելի յեն տաքացնում, քան թեք ընկնողները: Հենց այդ ե պատճառը, վոր կեսորին ավելի տաք ե լինում, քան թե առավոտներն ու յերեկոն ները:



Նկ. 19. Յերկրագունդն արեկի ճառագայթներից հավասարապես չի տաքանում:

Յերկրագունդն արեկի շուրջն այնպես ե պտտվում, վոր արեկի ճառագայթներն ամբողջ տարվա ընթացքում հասարակածի մոտ կեսորին համարյա ուղղահայց են ընկնում: Նույն իսկ ձմեռն այնպան տաք ե, վոր գետերն ու լճերը չեն սառչում: Ձմեռն այնտեղ այնքան տաք ե, ինչքան Յերկանում հուլիսին: Այդ տաք յերկրները հասարակածի յերկու կողմերով լայն գոտու պես պատռում են յերկրագունդը:

և կազմում տաք գոտի: Տաք գոտին տարածվում ե խեցետնի արեվալարձից մինչեվ այդեղիցեր արեվադարձը:

Յեթե տաք գոտուց ուղերվենք դեպի հյուսիս, կտեսնենք, վոր արեն այնքան ել բարձրից չի տաքացնում և ձմեռը ցուրտ ե լինում: Այս յերկրները բարեխառն են: Բարեխառն յերկրները նույնպես գոտու նման պատռում են յերկիրը և ձգվում խեցետնի արեվադարձից մինչեվ նյուսիսային ըեւեռային շրջանը:

Վորքան բարեխառն յերկրներից դեպի հյուսիս ենք շարժվում, այնքան ել յերկիրը քիչ ե տաքանում: Բեեռի շուրջն ամբողջ տարին սոսկալի սառնամանիքներ են լինում: Արեկ նույնիսկ ամառվա ընթացքում կեսօրին շատ չի բարձրանում: Այստեղ ձմեռային գիշերը շաբաթներ, ամիսներ ե տեսում, իսկ բեեռում 6 ամիս արեկ չի ծագում, 6 ամիս ել մայր չի մտնում: Յերկրի մեծ մասը ձյունով ու սառույցով ե ծածկված: Այդ յերկրները կազմում են ցուրտ գոտի, վոր սկավում ե հյուսիսային բեեռային շրջանից և տարածվում մինչև հյուս. բեեռը:

Յեթե հասարակածից դեպի հարավ գնանք, դեռ կմտնենք բարեխառն, ապա ցուրտ յերկրները: Ուրեմն հարավային կիսագնդում ել կան բարեխառն և ցուրտ գոտիներ:

Այսպիսով յերկրագնդի վրա կան հետեյալ գոտիները—1) հյուսիսային ցուրտ գոտի, 2) հյուսիսային բարեխառն գոտի, 3) տաք գոտի, 4) հարավային բարեխառն գոտի և 5) հարավային ցուրտ գոտի: Մենք ապրում ենք հյուսիսային բարեխառն գոտում:


Աշխատանք: Գոտիները ներկեցեք տարբեր գույներով («Աշխարհագրական տեսար», աշխատանք 3):

ՑԱՄԱՐԵՆ ՈՒ ԾՈՎԱԾ ՄԻԱՍՆԵՍՈՒՆ ԶԵՆ ՏԱՐԱՆՈՒՄ

Ցամաքն արեկից ավելի շուտ ե տաքանում, քան ծովը, բայց շուտ ել սառչում ե: Այդ պատճառով ցամաքն ամառները շատ տաքանում ե, իսկ ձմեռը՝ սառչում ե, մինչեւ ովկիանոսների ջուրը ամառը շատ տաք չի լինում, վոչ ել ձմեռը շատ ցուրտ: Ովկիանոսների բարեխառնությունը տարվա ընթացքում քիչ ե փոփոխվում:

Քամիներ.—Վորովիետե ամառը ցամաքը շատ ե տաք լինում, այդ պատճառով ողն այնտեղ տաքանում, բարձրանում ե, իսկ նրա տեղը բռնում ե ծովից յեկող սառն ողը: Ահա այդ ե պատճառը, վոր ծովափնյա յերկրներում ամառը քամին ծովի կողմից ե փշում,

իսկ ձմեռը՝ հակառակը: Մի քանի յերկրներում քամիները փչում են շատ կանոնավոր: Այսպես, որինակ՝ Հնդկաստանում, Չինաստանում և ամիս քամիները փչում են ծովից դեպի ցամաք, իսկ 6 ամիս՝ ցամաքից դեպի ծով: Այսպիսի քամիները կոչվում են մուստններ:



Նկ. 20. Մուստններ

Հասարակածի յերկու կողմերում ամբողջ տարին միևնույն ուղղությամբ կանոնավոր քամիներ են փչում, կորոնք կոչվում են պասատներ: Պասատները փչում են արևադարձներից դեպի հասարակած. հյուսիսային կիսագնդում նրանք փչում են հյուսիս-արևելքից, իսկ հարավային կիսագնդում՝ հարավ-արևելքից:

Ծովային հոսանքներ. — Քամիներից ծովի յերեսի ջուրը սկսում է շարժվել, հոսելու դաստիարակությունը ամբողջ տարին փշելով սույն ուղղությամբ շարժում են ովկիանոսի յերեսի ջուրը և տեղափոխում մի վո-



Նկ. 21. Պասատներ

Այսպես են առաջ յեկել այն ծովային հոսանքները, վորոնք հասարակածի մոտով շարժվում են արևելքից արևմուտք, Այդ հոսանքները ճանապարհին հան-

դիպելով վորեւ աշխարհամասի, ծովում են իրենց ընթացքը: Նրանք լինում են տաք յեկ ցուրտ: Տաք հոսանքներն սկսում են տաք գոտուց և ուղղում դեպի ցուրտ յերկրներ: Տաք հոսանքներից նշանավոր ե Գոլֆշտրոմը, վոր սկսելով Ամերիկայի Մեքսիկայի ծոցից, շարժվում է դեպի Յերկուպայի ափերը և տաքացնում: Ցուրտ հոսանքները գալիս են ցուրտ յերկրներից:

Աշխատանք. — Ծովային տաք հոսանքների ուղղությունը ցույց տվեք կարմիր սլաքներով, իսկ ցուրտ հոսանքներինը՝ կաղույտ կամ մի այլ գույնով («Աշխարհագր. տետր», աշխ. 4):

Ա Լ Բ Մ Ա

Զանազան յերկրներում ողը միատեսակ չե. մի տեղ տաք ելինում, մի տեղ՝ ցուրտ, մի տեղ խոնավ ե, մի ուրիշ տեղ՝ չոր: Մի յերկրում շարունակ քամիներ են լինում, իսկ մի ուրիշ տեղ



Նկ. 22. Կյանքը ցուրտ գոտում-սամոնդներ:

ոգը հանդարտ ե: Ամեն մի յերկիր յուր կլիման ունի: Եվ ողի տաքությունը և խոնավությունը և քամիները և առողջարար կամ վատառողջ լինելը միասին առած կազմում են մի տեղի կլիման:

Զանազան յերկրներում տարբեր կլիմաներ են լինում: Կանցուրտ, տաք, խոնավ, չոր, մեղմ, փոփոխական կլիմաներ:

Կլիմայից ե կախված յերկրի բուսականությունը և կենդանական աշխարհը. կլիմայից ե կախված և մարդու ապրուստը: Տաք և խոնավ յերկրներում բույսերը շատ են և բազմազան, իսկ չոր տեղերում՝ բուսականությունը աղքատ է, յերբեմն նույնիսկ շատ չոռությունից բույս ել չի լինում:

Կլիման կախված ե շատ պատճառներից:

Առաջին: Մի վորեւ յերկրի կլիման կախված ե նրանից, թե այդ յերկիրը վոր գոտում ե գտնվում, այսինքն հասարակածից վորքան հեռու ե: Յեթե յերկիրը հասարակածին մոտ է, նրա կլիման տաք կլինի, իսկ յեթե բեվեռին ե մոտ՝ ցուրտ:

Յերկրորդ: Բարեխառն գոտու բոլոր տեղերը նույն կլիման չեն ունենում: Դա կախված ե նրանից, թե այդ յերկիրը ծովափին մոտ ե, թե չե: Որինակ՝ Բաթումի շրջակայքը խոնավ է, իսկ Արարատյան դաշտը չոր, վորովհետեւ առաջինը գտնվում ե Սև ծովի ափին, իսկ յերկրորդը՝ ծովից հեռու ե:

Ասում ենք ծովափնյա յերկրներն ունեն խոնավ կամ ծովափին կլիմա, իսկ ծովից հեռու, ցամաքի ներսն ընկած յերկրները՝ շոր կամ ցամաքային: Ծովափին կլիման մեղմ ե լինում, ամառը ծովափին սաստիկ շոգեր չեն լինում, և վոչ ել ձմեռը սաստիկ ցըտեր: Ցամաքային կլիմա ունեցող յերկրներում ամառը շոգ է, իսկ ձմեռը՝ ցուրտ:



Նկ. 23. Կյանքը ցուրտ գոտում—լծկան յեղջերուները տունզրայում:

Յերրորդ: Մասսի գագաթը ձյունով ե ծածկված, իսկ նրա ստորոտում խաղողի այգիներ են փոփած: Պատճառը պարզ է, բարձրում ցուրտ ե լինում: Ուրեմն կլիման կախված ե նաև նրանից, թե վորեւ մի տեղ վորքան բարձր ե ծովի մակերեսութից:

Գորրորդ: Մեծ նշանակություն ունեն յերկրի կլիմայի համար և ծովային հոսանքները: Յեթե ծովային հոսանքը տաք է, այն դեպքում նա կտաքացնի այն յերկրի կլիման, վորի մոտով անցնում է, Գոլֆշտրոմը յուր տաք ջրերով տաքացնում ե Յեվրոպայի ամբողջ արևմտյան ափերը, և բավական խոնավություն ե տալիս:

Հինգերորդ: Վերջապես կլիման կախված ե և քամիներից: Ծովային տաք քամիները բերում են խոնավություն և տաքություն, իսկ ցամաքային քամիները՝ չորություն և ցուրտ: Այս դեպքում մեծ նշանակություն ունեն լիոնաշղթաները, վորոնք քամիների առաջն առնում են: Լեռնաշղթայի այն լանջերը, վորոնք դարձած են լինում տաք և խոնավ քամիների կողմը՝ ծածկված են ձոխ բուսականությամբ, իսկ հակառակ լանջերը, վոր յենթակա յեն ցուրտ քամիներին, ընդհակառակը, բուսականությամբ աղքատ են:

IV ԿՅԱՆՔԸ ՅԵՐԿՐՍԳԱՆԴԻ ՎՐԱ

Մենք տեսանք, վոր կլիման յերկրագնդի վրա ամեն տեղ միատեսակ չե: Յուրտ գոտու մեծ մասը ծածկված ե ձյունով, սառույցով. շատ բույսեր, վոր մեղ մոտ աճում են, բևեռային յերկրներում բոլորովին չկան: Այդպիսի յերկրներում մարդիկ դժվարությամբ են ապրում կազմակերպությունում այգիներ, այգիներու մարդիկ պատճառով պատահում են փարթամ, մշտականաշ բույսեր, վորոնցից շատերը, վայրի վիճակում անզամ, մարդուն մնունդ են տալիս:

Նկ. 24. Կյանքը տաք գոտում—օվայրենինեան իրենց բնակարանի ասած:



Տաք յերկրների վայրենիները շորի կարիք անգամ չեն զգում:


Յույց տալու համար, թե վորչափ բազմազան ե կյանքը յերկրագնդի վրա, նկարագրենք մի քանի պատկերները բնությունից:

Հյուսիսային Սառուցյալ ովկիանոս: Հյուս Սառուցյալ ովկիանոսը տարվա մեծ մասը ծածկված է սառուցյներով և ներկայացնում է մի կատարյալ անապատ: Բևեռային գիշերները տեսում են շաբաթներ, ամիսներ: Այդ ժամանակ արեք յերկնակամարի վրա բոլորովին չի յերևում և լուսինը, աստղերն ու հյուսիսափայլն իրենց թույլ լույսով լուսավորում են սառուցյների յերեսը:

Ամառը սառուցյները տեղատեղ հալվում են. քամին ջարդում են նրանց և շարժում ծովի յերեսով, մինչև վոր բոլորովին հալվում են կամ կպչում վորեւ ցամաքի ափերին: Ովկիանոսի վորոշ տեղերը ամառը բացվում են, ազատվում սառուցյներից. այնտեղ յերեսում են բաղմաթիվ մանր ջրիմուռներ, վիստում են զանազան մանր կենդանիներ, վորոնք գրավում են ձկներին: Ձկներից հետո յերեսում են թռչուններ և ծովային գաղաններ՝ փոկեր, ծովացուլեր, կետեր և այլն: Դա ձկնորսության ամենալավ ժամանակն է: Ձկնորսները, վերցնելով իրենց հետ մի քանի շաբաթվա պաշար՝ նավերով ծով են դուրս գալիս, ձկներ և ծովային գաղաններ վորում:

Կարգացեք «Նանսենի ճանապարհորդությունը» («Աշխարհագրական զրուցյներ»):

Տունդրա: Տունդրաները մամուապատ, ընդարձակ ու աղքատ հարթություններ են, վոր գոտու նման ձգվում են Հյուս. Սառու-



Նկ. 25. Բուսականության տարածումը յերկրագնդի վրա:

ցյալ ովկիանոսի ափերով: Տունդրաներ կան թե Ասիայի և Յեվրոպայի, և թե Ամերիկայի հյուս. ափերին: Զմեռը տունդրանե-

րի շրջանում նույնպես յերկար ե տեսում: Մեպտեմբերի կեսերից արդեն սկսում է ձյուն գալ և մի յերկու շաբաթվա ընթացքում յերկիրը ծածկվում է ձյունի հաստ շերտով: Գետերն ու լճերը սառչում են, ծածկվում սառուցյի հաստ շերտով և տունդրաներն այդ ժամանակ ներկայացնում են անծայր ու անսահման ձյունապատ դաշտեր:

Սկսվում են խիստ սառնամանիքներ և որ որի վրա սաստկանում: Յերբեմն վչում են ցուրտ քամիներ և ձյունապատ դաշտերում ձյունի ամպեր բարձրացնում:

Գալիս ե ամառը: Գետնի յերեսը, հազիվ մեկ մետրի չափ, հալվում է, իսկ դրանից խոր մնում է մշտապես սառած: Կարձատեև ամառվա ընթացքում արևի թույլ ճառագայթներն այնքան ել չեն կարողանում գետինը տաքացնել: Գետինը ծածկվում է մամուռով և մոխրագույն սպիտակավուն քարագոսով, վորի մեջ յերեսում են մանր թփեր, տեղատեղ ցածրիկ, ծոմոված կեշիներ: Ճանապարհորդը շըջում է որերով, շաբաթներով, անցնում է հարյուրավոր վերստեր և ամեն տեղ նոյն պատկերն է տեսնում:

Կենդանական աշխարհի ներկայացուցիչներն են այդտեղ ապրող սամոեդները, հյուսիսային յեղջերուների հոտերը, սպիտակամորթ աղվեսները, իսկ լճերի ափերին յերեսում են հեռու տեղերից յեկած բաղմաթիվ ջրային թռչուններ՝ վայրի բաղեր, մինչև անգամ կարապներ: Նրանք բոլորը ամառվա հյուրեր են, վոր գալիս են բուն դընելու, ձագեր հանելու կամ առատ վորս, կերակուր ճարելու: Ամառվա ամիսներն անցնելուն պես նրանք չվում են դեպի հարավ, տաք յերկրներ:

Աշխատանք: Դիտեցեք բուսականության քարտեզը և ասացեք, թե տունդրաները վոր աշխարհամասերում են գտնվում (նկ. 25): Ինչպէս Աֆրիկայում կամ Ավստրալիայում տունդրաներ չկան: Ինչպէս տունդրաներում անտառներ չեն պատահում:

Կարգացեք «Սամեղներ» հոգվածը («Աշխարհագրական զրուցյներ»)

Բարեխառն զոտու անտառներ: Տունդրաներից հարավ ձգվում է փշատերեվ անտառների շրջանը: Այդ անտառները բաղկացած են գլխավորապես շամուց և յեղինուց, վորոնց տերեները փշի կամ ասեղի են նմանվում: Արևին այստեղ ավելի բարձրից ե տաքացնում, քան տունդրաներում, բայց ձմեռները լինում են ցուրտ, խոր ձյունը ծածկվում յերկիրը և գետերն ու լճերն ծածկվում են սառցի բա-

վական հաստ շերտով։ Զմեռային ցրտերին հաջորդում ե տաք աշմառը և արևն իր ճառագայթներով կենդանացնում ե բնությունը։



Նկ. 26. Հյուսիսային անտառների և տունդրայի կենդանիները (կուղի, հյուս. յեղջերու, քաղթարինե, արջ)։

Փշատերև անտառների կենդանիները շատ են ու բազմազան։ Այստեղ մշտապես ապրում են զանազան թռչուններ, սկյուռներ, աղվեսներ, արջեր և այլն։ Նրանք ծառերի ճյուղերի տակ կամ փշակներում իրենց համար բներ ու վորջեր են շինում և ամառաձմեռ կարողանում են սնունդ ճարել։ Յերբ աշունը գալիս ե և առաջին ճյունը նստում գետնին, գյուղացիներն առնում են հրացանները և անտառ գնում, վորսում են զանազան թռչուններ ու գաղանններ, միսը և մորթին վաճառում մոտակա քաղաքներում։ Ավելի արդյունավոր գործ ե անտառային արդյունաբերությունը։ Դաշտային աշխատանքները վերջացնելուց հետո գյուղացիները կը բարառում են անտառները, լաստեր պատրաստում և գետերով փոխադրում հեռավոր տեղեր վաճառելու։

Թեև յերկրագործությամբ ել են պարապում, բայց հացահատիկներն այնքան ել մեծ բերք չեն տալիս. կլիման ցուրտ ե, հողը անբերը։

Փշատերև անտառներից հարավ, վորտեղ կլիման ավելի տաք ե,

ձգվում են սաղարթավոր անտառներ, վոր բաղկացած են հաճարի, բոխի, թեղի, կաղնի և այլ ծարերից։ Սաղարթավոր ծառերի տերևները ձմեռային ցրտերին չեն դիմանում. ամեն աշնան նրանք դեղնում, թափվում են, իսկ գարնանը կրկին աճում։

Սաղարթավոր անտառների շրջանում յերկրագործությունն առաջնակարգ տեղ է բռնում։ Հացահատիկներից բուսնում են ցորեն, կորեկ, հաճար։ Ընդարձակ անտառներ կտրատված են և նրանց տեղն այժմ վարելահողերն են բռնում։ Բնակիչներն ել այս շրջանում անհամեմատ շատ են և բարեկեցիկ։

Վերջապես բարեխառն գոտու հարավային տաք մասերում պատահում են այնպիսի ծառեր, վորոնց սերեները աշնանը միանգամից չեն թափվում, այլ ծառի վրա փոխվում են մեկ-մեկ, հետզհետե. դրանք կոչվում են մշտականաչ (յերկարատե-կանաչ) ծառեր։ Այդպիսի ծառերից են մագնոլիան, ոլեանդրը, ձիթենին, նարնջենին, կիտրոնը և այլն։

Ցույց տվեք փշատերև, սաղարթավոր և մշտականաչ անտառների շրջանները (նկ. 25)։

Կարդացեք «Անտառ», «Վորսն անտառում», «Անտառի արդյունաբերությունը» հոդվածները («Աշխարհագր. զրույցներ»)։

Տափատան (ստեղ).—Անտառները բավական խոնավություն են պահանջում. այդ պատճառով բարեխառն գոտու այն տեղերում, վորտեղ կլիման չոր ե, անտառի փոխարեն պատահում են խոտով ծածկված ընդարձակ տարածություններ, վոր կոչվում են տափատաններ։

Ամառը տափատանում շոր ե լինում, իսկ ձմեռը՝ ցուրտ։ Գարնանը, ձյունը հալվելուց հետո, տափատանը ծածկվում է թարմ կանաչով ու բազմաթիվ ծաղիկներով։ Բայց յերբ ամառվա շողերը գալիս են, արևի ճառագայթներից խոտը խանձվում, չորանում ե. գետինը սաստիկ չորությունից ձեղբեր ե տալիս և կյանքը մեռնում ե։ Աշնանը տափատանը անձրեների շնորհիվ կրկին կանաչում ե։

Տափատանում ապրում են բոչվոր ժողովուրդներ։ Յերբ մի տեղ խոտը չորանում ե, նրանք իրենց ամբողջ գույքով, անասուններով քոչում են մի ուրիշ տեղ։ Քոչվորի կյանքն ամբողջովին յուր անասուններից ե կախված, վորովիետե նա վոչ յերկրագործություն գիտե և վոչ ել արհեստներ։

Տափաստաններում ապրում են վոչ միայն քոչվոր-անասնապահներ, այլև յերկրագործներ։ Նրանք մշակում են տափաստանի պարարտ հողը, հացահատիկներ են ցանում, իսկ տաք և ջրառատ տե-



Նկ. 27. Ասիայի բարձրավանդակների կենդանիներ (վայրի ձի, վայրի ուղու, վայրի յակ, լեռն. արջ, անտիլոպ, արջամուկ):


ղերում, մշակում են նաև բրինձ ու բամբակ։ Չոր տեղերում գետերից ջրանցքներ են անցկացնում և վոռոգում արտերն ու այգիները։

Ցույց տվեք տափաստանների շրջանը։

Անապատ.—Բարեխառն և տաք զոտիների ամենաչոր տեղերում պատահում են անապատներ, Խորհրդային Միության մեջ՝ անապատներ կան թուրանի դաշտում։ Զմեռն այնտեղ սառնամանիքներ են լինում, իսկ ամառը՝ սաստիկ շոգեր։ Անձրև ու ձյուն շատ քիչ ե գալիս։ Ընդարձակ տարածություն ծածկված ե ավազով, վորից քամին ավազաթմբեր ե գոյացնում։ Փոթորկի, ուժեղ քամիների ժամանակ յերկնքը ծածկվում ե ավազե ամպերով։

Շատ նշանագոր ե Սահարա անապատը, վոր գտնվում է Աֆրիկայում։ Ամբողջ 9 ամիս սարսափելի շոգեր են լինում։ Անձրև գալիս ե միայն ձմեռը և այն ել շատ քիչ։ Նա բուսականությունից զուրկ ե և ծածկված ավազով և քարակոշերով։ Միայն յերբեմն պատահում են անտերև և յերկար արմատներով թփեր։

Անապատներն աղքատ են և կենդանիներով. գլխավորապես պատահում են մողեսներ ու կարիճներ, վորոնք կերակրվում են մանր մժեղներով։ Շատ հաճախ դրանց կարելի յե տեսնել անապատի



Նկ. 28. Կարավանն անապատում։

Ճայրերին. որինակ՝ Սահարայի ծայրամասերում ապրում են ջայլամներ ու անտիլոպներ, վորոնք սնունդ ճարելու համար ընդարձակ տարածություններ են կտրում։



Նկ. 29. Ուղիու։

Անապատով ճանապարհորդելն ել շատ դժվար է, մանավանդ շոգ ժամանակ։ Սովորաբար անապատներում ճանապարհորդում են ուղարկով, վորոնք մի քանի որ կարող են առանց ջրի ու կերի դիմանալ։


Անապատներում պատահում են և այնպիսի տեղեր, վոր ծածկված են լինում թարմ խոտով, յեղեղներով և ծառերով։ Այդպիսի տեղերը կոչվում են ոազիս։ Ոազիսն առաջանում է այնտեղ, վորաեղ ստորյերկրյա ջուրը գետնի յերեսն է դուրս գալիս։ Ընդարձակ ոազիսներում յերբեմն մարդիկ բնակություն են հաստատում, հիմնվում են քաղաքներ։ Սահարայի ոազիսներում աճում է փյունիկյան արմավենի, վորի պտուղներով կերակրվում են ուղարկը և մարդիկ։

Կարդացեք «Ոազիսի առաջանալը», «Կենտրոն. Ասիայի անապատում» հոդվածները («Աշխարհ. զրույցներ»)։

Արեվադային անտառ.

—Տաք գոտու խոնավ տեղերում աճում են արևիադարձային անտառներ։ Նրանք բաղկացած են մշտականաշբույսերից, վորոնք ամբողջ տարին անընդհատ աճում են։ Տերեները փոխվում են մեկմեկ և միանգամից չեն թափվում, ամբողջ տարին ծառերը կանաչ են լինում։ Շատ բույսեր աճում են ուրիշ բույսերի վրա։ Ամբողջ անտառը, խըճճված լինելով բազմաթիվ պատառուկներով, ներկայացնում է մի խիտ ցանց, վորի միջով անցնելը բավական դժվար է։

Արևադարձային անտառում կան բազմատեսակ բույսեր, վորոնցից աչքի յեն ընկնում նկ. 30. Կյանքը տաք գոտում—արևադարձային արմավենին, ըստանը, բամբուկը և այլն։ Բազմազան են և կենդանիները։ Անթիվ ու անհա-



Նկ. 30. Կյանքը տաք գոտում—արևադարձային անտառ։

մար են թոշուններն ու թիթեռները, բղեղները և այլն։ Նրանք աշքի յեն ընկնում իրենց վառ գույնով և մեծությամբ։ Շատ կան և ոձեր, շատերը նրանցից հսկայական մեծություն ունեն։ Գետերում և լճերում պատահում են կոկորդիլոսներ, իսկ ծառերի վրա՝ կապիկներ։ Արևադարձային անտառների կենդանիներից երենց խոշորությամբ հայտնի յեն փիղը, ոնդյեղջուրը։



Նկ. 31. Կյանքը տաք գոտում—բամբուկ։

Արևադարձային անտառներում թե մենք և թե յեվրոպացիները ապրել չենք կարող. այնտեղ խոնավ է և տոթ, մարդիկ հիվանդանում են մանավանդ գեղին տենգով։ Այդ ե պատճառը, վոր արևադարձային անտառներում այնքան շատ մարդ չի ապրում և ապրողներն ել կիսավայրենի ցեղեր են։ Այսպես չյուսիսային Ամերիկայում, Ամազոնի գետի անտառներում ապրում են զանազան հնդկական ցեղեր, վորոնք զիսավորապես վորորդությամբ և ձկնորսությամբ են պարապում։ Վորս գտնելու համար նրանք թափառում են տեղից տեղ և յերբ վորեե տեղ կանգ են տոնում՝ ծառի ճյուղերից շինում են ժամանակոր խրճիթ։ Նրանց հագուստը բաղկացած է մի գոտուց միայն, իսկ շատերն ել վոչինչ չեն առնում վրան։ Շա-


Անապատով ճանապարհորդելն ել շատ դժվար է, մանավանդ շող ժամանակ։ Սովորաբար անապատներում ճանապարհորդում են ուղտերով, վորոնք մի քանի որ կարող են առանց ջրի ու կերի դիմանալ։

Անապատներում պատահում են և այնպիսի տեղեր, վոր ծածկված են լինում թարմ խոտով, յեղեգներով և ծառերով։ Այդպիսի տեղերը կոչվում են ոազիս։ Ոազիսն առաջանում է այնտեղ, վորաեղ սառը յերկըյա ջուրը գետնի յերեան ե դուրս գալիս։ Ընդարձակ ոազիսներում յերբեմն մարդիկ բնակություն են հաստատում, հիմնվում են քաղաքներ։ Սահարայի ոազիսներում աճում ե փյունիկյան արմավենի, վորի պտուղներով կերակրվում են ուղտերը և մարդիկ։

Կարդացեք «Ոազիսի առաջանալը», «Կենտրոն. Ասիայի անապատում» հոդվածները («Աշխարհ. զրույցներ»)։

Արեվադարձային անսառ։ — Տաք գոտու խոնավ տեղերում աճում են արեվադարձային անտառներ։ Նրանք բաղկացած են մշտականաշ բույսերից, վորոնք ամբողջ տարին անընդհատ աճում են։ Տերեները փոխվում են մեկմեկ և միանգամից չեն թափվում. ամբողջ տարին ծառերը կանաչ են լինում։ Շատ բույսեր աճում են ուրիշ բույսերի վրա։ Ամբողջ անտառը, խըճածված լինելով բազմաթիվ պատաստուկներով, ներկայացնում ե մի խիտ ցանց, վորի միջով անցնելը բավական դժվար է։

Արևադարձային անտառում կան բազմատեսակ բույսեր, վորոնցից աչքի յեն ընկնում նկ. 30. Կյանքը տաք գոտում—արևադարձային արմավենին, բանանը, բամբուկը և այլն։ Բազմազան են և կենդանիները։ Անթիվ ու անհա-



Նկ. 30. Կյանքը տաք գոտում—արևադարձային անտառ։

ժար են թռչուններն ու թիթեռները, բղեգները և այլն. Նրանք աչքի յեն ընկնում իրենց վառ գույնով և մեծությամբ։ Շատ կան և ոձեր. շատերը նրանցից հսկայական մեծություն ունեն։ Գետերում և լճերում պատահում են կոկորդիլոսներ, իսկ ծառերի վրա՝ կապիկներ։ Արևադարձային անտառների կենդանիներից իրենց խոշորությամբ հայտնի յեն փիղը, ոնդյեղջուրը։



Նկ. 31. Կյանքը տաք գոտում—բամբուկ։

Արևադարձային անտառներում թե մենք և թե յեվրոպացիները ապրել չենք կարող. այնտեղ խոնավ է և տոթ, մարդիկ հիվանդանում են մանավանդ գեղին աենդով։ Այդ ե պատճառը, վոր արևադարձային անտառներում այնքան շատ մարդ չի ապրում և ապրողներն ել կիսավայրենի ցեղեր են։ Այսպես՝ Հյուսիսային Ամերիկայում, Ամազոնի գետի անտառներում ապրում են զանազան հնդկական ցեղեր, վորոնք գլխավորապես վորսորդությամբ և ձկնորսությամբ են պարապում։ Վորս գտնելու համար նրանք թափառում են տեղից-տեղ և յերբ վորեւ տեղ կանգ են առնում։ ծառի ճյուղերից շինում են ժամանակավոր խրճիթ։ Նրանց հագուստը բաղկացած ե մի գոտուց միայն, իսկ շատերն ել վոչինչ չեն առնում վրան։ Շա-

տերը նրանցից ներկում են իրենց մարմինը զանազան գույներով և զարդարանքներ են կրում:

Կարդացեք «Արևադարձային անտառ», «Քինայի ծառը», «Բամբուկ», «Ռիետինն ինչից ե ստացվում», «Կյանքը կոնկո գետի ափերին», «Մի որ Ցելոնում» հոգվածները («Աշխ. զրույցներ»):

Աշխատանք.—Կիսագնդերի քարտեղի վրա բուսական շրջանները ներկեցեք տարրեր գույներով («Աշխարհ. տետր»—աշխատանք 5):



Նկ. 32. Կյանքը տաք գոտում—բանան:

Լեռնային շրջաններ.—Մենք տեսանք, վոր բուսականությունը հասարակածից դեպի բնեռ աստիճանաբար աղքատանում ե: Դրա գլխավոր պատճառն, ինարկե, տաքությունն ե: Բայց տաքությունը հետզհետե պակասում ե վոչ միայն դեպի բնեռ գնալիս, այլև այն դեպքում, յերբ սարի ստորոտից դեպի գագաթն ենք բարձրանում: Արարայան գաշտում աճում են խաղող, բրինձ, իսկ Մասսի գագաթը ծածկված է հավերժական ձյունով: Կովկասյան լեռնաշղթայի սոսրոտում աճում են հաճարի, կաղնի անտառներ. մի քիչ բարձր նրանց փոխարեն փոփում են փշատերև անտառներ, իսկ ավելի բարձր՝ լեռնային մարզագետիններ և ապա սկսվում ե հավերժական ձյան ծածկոցը: Բարձր լեռների մարգագետիններում արածում են կայտառ այծքաղը և լեռնային զոչխարը, անմատչելի ժայռերի մեջ բներ են շինում զիշատիչ թռչունները:

Լեռնային տեղերում մարդու գլխավոր պարապմունքը անասնա-

պահաւօծումն ե: Կովկասյան լեռնացիները պահում են ձի, վոչխար և այծ, Բըղից պատրաստում են յափնջի, շալ, գորգ և այլն:

Լեռնային մարգագետինները մեծ նշանակություն ունեն մեր յերկրի, ինչպես և ամբողջ Անդրկովկասի տընտեսության համար: Ամառը, յերբ ցածր տեղերում դաշտերի խոռոք չորանում ե, զյուղացիներն իրենց անասունները սար են տանում: Ամբողջ ամառը նրանք իրենց անասունները պահում են սարերում, պանիր և յուղ են պատրաստում և յերբ աշնան հովերն ընկնում են, կրկին իջնում են ցած, իրենց բնակավայրը:



Նկ. 33. Կովկասի կենդանիներ—քարայծ, լեռնաքաղ, կովկասյան զուրբ (ցլավայրի):

Կարդացեք «Մասսի գագաթը բարձրանալը», «Քիզինդի սաոցադաշտի վրա» հոգվածները («Աշխ. զրույցներ»):


V. ՄԱՐԴԸ ՅԵՎ. ՆՐԱ. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մենք տեսանք, վոր մարդն ապրում է յերկրագնդի բոլոր գոտիներում: Նա բնակություն է հաստատում այնտեղ, վորտեղ կարող է սնունդ ճարել և յուր գոյությունը պահպանել: Տունդրայի սամոեզը, Ավստրալիայի սևամորթ վայրենին, Յելլոնի սինգալեզն ու մեր զյուղացին կապվել են իրենց հայրենիքի հետ և ապրում են նրա տված բարիքներով: Անմարդաբնակ են միայն բարձր լեռան ձյունապատ գագաթները, բևեռային սաոցապատ յերկրները և անապատի ավագները:

Ամբողջ յերկրագնդի վրա ներկայումս ապրում է մոտ 1800 միլիոն մարդ, վորի կեսից ավելին ապրում ե Ասիայում:

Սակայն բոլոր մարդիկ նույն կերպ չեն ապրում: Կան վայրենի, քոչվոր և նպտակյաց ժողովուրդներ:

Վայրենիները թափառում են տեղից տեղ, զբաղվում են վորսորդությամբ և ձկնորսությամբ։ Ծառի ճյուղերից և տերևներից բնակարան են շինում։ Ցերք վորսը մի տեղ վերջանում է, նըրանք թողնում են իրենց բնակարանը և վորսի նոր տեղ փնտրում, նոր բնակարան են շինում։ Նկ. 34. Վայրենիներն իրենց փայտի գենքերով վորսորդությունը և անում։



Համարյա մերկ են ման գալիս. կրակ ստանալու համար փայտը փայտին այնքան են քսում, մինչև վոր բոցավառվում է. գործ են ածում փայտե հասարակ զենքեր։ Դրել-կարգալ չփառեն։ Վայրենիներ են Ավստրալիայի Բնիկները, Հարավային Ամերիկայի հնդիկներից շատերը և այլն։

Քոչվորներն անասնապահությամբ են պարապում։ Անասունների բրդից թաղիքներ են պատրաստում, վորով ծածկում են իրենց վրանները։ Ցերք մի տեղ խոտը պակասում է, քանդում են վրանները և բարձում անասուններին ու քոչում մի ուրիշ տեղ, նոր արոտատեղի վորոնելու։ Նրանց ամբողջ ապրուստը կախված է անասուններից։ Քոչվոր ժողովուրդներ են կիրգիզները, մոնղոլները, արաբ ցեղերից շատերը և այլն։

Նստակյաց ժողովուրդներն ապրում են մի տեղ, շինում են գյուղեր և քաղաքներ, զբաղվում են յերկրագործությամբ, գիտություն ու ար-



Նկ. 35. Ավստրալիացիները փայտը փայտին բռելով կրակ են ստանում։

վեստ, գիր ու դպրոց ունեն։ Նստակյաց ժողովուրդներն ուրիշ կերպ կոչվում են նաև կուլտուրական ժողովուրդներ—որինակ՝ հայերը, ոռւսները, ֆրանսիացիք և այլն։

Կարգացեք «Բնության ազգեցությունը մարդու վրա», «Ոգտակար բույսեր», «Ընտանի կենդանիներ» հոդվածները («Աշխ. զրուցներ»)։



Նկ. 36. Քոչվորների բնակարանները (կերպեցի վրանը և սամոնդի չումը)։

ՄԱՐԴԱՍՅՐԱ ՑԵՎԵՐ

Մարդիկ իրարից տարբերվում են վոչ միայն իրենց կենցաղով, այլև կաշվի գույնով, գանգի ձեռվ և մազերի կազմվածքով։ Բոլոր մարդիկ բաժանվում են յերեք ցեղի—սպիտակ, ղեղին և սև։



Նկ. 37. Գեղին ցեղ—մոնղոլ և մոնղունչ։

Սպիտակ ցեղին պատկանում են հայերը, վրացիները, ոռւսները, Փրանսիացիները, պարսիկները, արաբները և այլն։ Այս ցեղին պատկանող մարդկանց կաշին վարդագույն սպիտակ ե, յերբեմն թուխ։ Մազերը բարակ են և խիտ ածում են զլիի և գեմքի վրա։ Նրանք մեծ մասամբ ապրում են Յեվրոպայում և Ասիայի արևմտյան մասերում։ Ամերիկան և Ավստրալիան գտնելուց հետո նրանք գաղթե-

ցին այդ աշխարհամասերը և այժմ Ամերիկայի և Ավստրալիայի ազգաբնակության մեծ մասը սպիտակ ցեղին եւ պատկանում։



Նկ. 38. Դեղին ցեղ—ամերիկական հնդիկ և մալայացի։

Դեղին կամ մննդուական ցեղի մարդկանց գույնը գեղնավուն եւ ֆանգը լայն ե, կլոր, այտոսկըները դուրս ընկած։ Մազերը սկ են, կոշտ ու հաստ և աճում են շատ նոսր։ Աչքերը սկ են, բայց նեղ և թեք դասավորված։ Այդ ցեղին են պատկանում։ 1. մննդուական ժո-




Նկ. 39. Սկ ցեղ—նեղը և հոտունսոտ։

ղոփորդները—այսինքն բուն մոնղոլները, չինացիները, յապոնացիները, տաճիկները (թյուրքերը), Ադրբեջանի թուրքերը և այլն։ 2. մալայացիները, վոր ապրում են Մալայան արշիպելագում։ 3. Ամերիկայի հնդիկները (հնդկացիները)։

Սեվ ցեղի մարդկանց գույնը ընդհանրապես շատ մութ ե, սկսած սեից մինչև կինամոնագույնը։ Մազերը սկ են, գլուխը փոքր ինչ կողքերից սեղմած, քիթը լայն, ծնուաները դուրս ցըցված, շրթունքները հաստ։ Սկ ցեղին են պատկանում։ 1. նեղըները, վոր ապրում են միջին Աֆրիկայում, 2. հոտունսոտները և զուշմենները, վոր ապրում են Հարավային Աֆրիկայում, 3. Նոր-Գվինեայի պապուանները, 4. Ավստրալիայի բնիկները—ավստրալիացիները։

Նկ. 40. Սկ ցեղ—ավստրալիացի։



Նկ. 41. Մարդկային ցեղերի տարածումը յերկրագնդի վրա։

ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԱՌԱՋԱՎԱՐԱՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՍԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

I. Ա. Ս Ի Ա.

Մենք այժմ անցնելու յենք Ասիան, վոր ինչպես գիտեք, ամենամեծ աշխարհամասն ե. նա Յեվրոպայից մեծ է մոտ $4\frac{1}{2}$ անգամ, իսկ Ավստրալիայից մոտ 6 անգամ:

Յեթե ուշադրությամբ դիտեք գլոբուսը կամ կիսագնդերի քարտեզը, դուք կտեսնեք, վոր Ասիան շատ մոտ է մյուս աշխարհամասերին: Նա ուղղակի միացած է Յեվրոպայի հետ. կարծես Յեվրոպան Ասիայի թերակղին լինի: Յեվրոպայի և Ասիայի սահմանը սովորաբար ընդունում են Ուրալյան լեռները, Ուրալ գետը և Կովկասյան լեռնաշղթան:

Ասիան Աֆրիկայի հետ միացած է Սուեզի պարանոցով, վորով այժմ անցնում է նշանավոր Սուեզի ջրանցքը: Այս ջրանցքով Միջերկրական ծովը միանում է Հնդկական օվկիանոսի հետ:

Նա մոտ է գտնվում և Ամերիկային, վորից բաժանվում է Բերինգյան նեղուցով: Այդ նեղուցի լայնությունը մոտ 100 կիլոմետր է միայն:

Աշխատանք.—Քառանկյունիների միջոցով գծեցեք Ասիայի, Յեվրոպայի և Խորհրդ. Միության մեծությունների դիագրամը («Աշխարհ. տետր»—աշխ. 6):

Ասիայի ափերի գծագրությունը,—Ասիայի ափերը կտրտված են բազմաթիվ ծովերով ու ծոցերով: Արևելյան կողմն ընկած է Մեծ կամ Խաղաղ օվկիանոսը, վոր առաջացրել է մի շարք ծովեր (Բերինգյան, Ոխոտի, Յապոնական, Դեղին յնվ Արևելյան Չինական ծովերը): Ցոյց տվե՞ք:

Հարավային կողմը գտնվում է Հնդկական ովկիանոսը, վորի մասերն են Պարսից ծոցը և Կարմիր ծովը (ցոյց տվե՞ք):

Արևմտյան կողմից նրա ափերը վորողում են Միջերկրական և

Սեվ ծովերը, վորոնք Աստվածայան ու կիանոսի մասերն են կազմում (ցոյց տվե՞ք):

Բացի բազմաթիվ ծովերից և ծոցերից դուք տեսնում եք նաև բազմաթիվ կղզիներ և թերակղիներ: Դեպի հարավ դարձած են Հնդկաստան, Հնդկական և Արարական թերակղիները: Արևմտյան կողմում գտնվում է Փոքր Ասիան, իսկ արևելյան կողմում Կորեան և Կամչատկան (ցոյց տվե՞ք):

Կղզիների մեծ մասը գտնվում է նրա հարավ-արևելյան կողմը: Նշանավոր են Մալայան արշիպելագը (Բորնեո, Յավա, Սումատրա, Ճելեբու), Փիլիպպայան, Յապոնական կղզիները, Սախալինը և Ճյոնը (Հնդկաստանի մոտ): (Ցոյց տվե՞ք):

Աշխատանք.—Ասիայի համբ քարտեզի վրա նշանակեցեք բոլոր ովկիանունները, ծովերը, ծոցերը և նեղուցները («Աշխարհ. տետր»—աշխ. 7): Յենթաղենները թե դուք ցանկանում եք Բաթումի վրայով Ասիայի շուրջը ճանապարհորդել. կարող եք ցույց տալ ձեր անցնելիքը ճանապարհը:

Ասիայի ամենահարավային կետն է Բուրու, իսկ ամենայուսիսայինը՝ Զելյուսկին: Մասշտարի ոգնությամբ վորոշեցեք թե Զելյուսկինց մինչև Բուրու քանի կիլոմետր կամ վերստ եւ:

Ասիայի մակերեվույթը.—Ասիան ամենաբարձր աշխարհամասն ե. այստեղ են գտնվում յերկրագնդի ամենաբարձր լեռներն ու բարձրավանդակները, վորոնք ձըդգում են արևմուտքից դեպի արևելք:

Ամենաարևմտյան բարձրավանդակն է Փոքր Ասիան, վոր տարածվում է Միջերկրական ծովից մինչև Հայկական լեռնաշխարհը: Հայկական լեռնաշխարհից դեպի արևելք՝ մինչև Պամիր լեռնաշխարհը ձգվում է Իրանի բարձրավանդակը, վոր արջապատպած է Հայկակը, վոր արջապատպած է Իրանական կամ Պամիրը, վարելանյան լեռնուկուց և Սուլեյմանյան լեռ-



ներով: Պամիրից գեպի արևելք մինչև Խինդան գտնվում է Կենտրոնական Ասիան, վորի շուրջը գտնվում են Հիմալայան, Խինդան, Ալտայան և Տյան-Շան լեռները:

Ամենաբարձր լեռնաշղթաներն են, վոչ միայն Ասիայում, այլև ամբողջ յերկրագնդի վրա, Հիմալայը և Կարակորումը: Հիմալայների ամենաբարձր գագաթը—Եվերեսոր ծովի մակերեսույթից մոտ 9 կիլոմետր բարձր է, իսկ Կարակորումի գագաթը (Գոգին-Ռոտեն) մոտ 8¹/₂ կիլոմետր բարձրություն: Կարակորումը և Հիմալայն իրենց ամբողջ յերկարությամբ ծածկված են մշտական ձյունով: «Հիմալայ» անունը նշանակում է «ձյունի հայրենիք»:

Բարձրագնդակներից ամենաբարձրն է Տիբեթը, վոր ընկած է Կենտրոնական Ասիայում, Կուեն-Լուն և Հիմալայ շղթաների մեջ:


Դաշտավայրերը գտնվում են Ասիայի յեզերքներին: Հայաստանից հարավ ընկած է Միջագետքի դաշտավայրը, վորի միջով հոսում են Յեփրատ և Տիգրիս գետերը: Այս գետերը իրենց հետ ավազ ու տիղմ բերելով, ժամանակի ընթացքում դոյացրել են Միջագետքի դաշտավայրը: Կենտրոնական Ասիայից հարավ ընկած է Հնդկական դաշտավայրը, վոր դոյացել է Ինդոս և Գանդակ գետերի աղմբից. գեպի հյուսիս Սիրիական դաշտավայրը, վորի միջով հոսում է Ոբ գետը: Վերջապես Կենտրոնական Ասիայից արևելք գտնվում է Չինական դաշտավայրը (Հոնգ-հո կամ Դեղին գետով):

Աշխատանք.—Ասիայի քարտեզի վրա ցուցյալիքը բոլոր այն բարձրագնդակները, լեռներն ու դաշտավայրերը, վոր մենք հիշեցինք: Ի՞նչ լեռներով են շրջապատված Իրանը, Փոքր-Ասիան:

Ի՞նչու գետերը մեծ մասամբ Ասիայի միջին մասերից են սկսվում:

Ցույց տվեր գլխավոր գետերը:

Ասիայի համբ քարտեզի վրա դաշտավայրերը ներկեցեք կանաչ գույնով, իսկ դաշտավայրերը՝ դարչինագույն: Գրեցեք գլխավոր բար-



Նկ. 43. Տեղափոխության միջոցներից
մեկը Պարսկաստանում:

Ճրավանդակների, դաշտավայրերի և լոռնաշղթաների անունները («Աշխարհ. տետր»—աշխ. 9):

Նշանակեցեք նույն քարտեզի վրա գլխավոր գետերի անունները:

Ա.ՍԻ.Օ.Յ. Կ.Ի.Մ.Ա. Յ. Ե.Վ. Թ.ՈՒ.Ա.Վ.Ն.Ո.Ւ.Թ.Յ.Ո.Ւ.Ը.

Ասիան հարավից գեպի հյուսիս շատ ե տարածված: Հնդկաստանն ու Հնդկաշխնը գտնվում են տաք գոտում, մինչդեռ Սիրիրի հյուսիսային մասերը հյուսիսային ցուրտ գոտումն են: Մյուս կողմից ել նրա մակերեսույթը շատ մեծ է ու մասերը բազմազան: Պարզ է, վոր նրա կլիման ամեն տեղ միևնույնը չի կարող լինել:

Կենտրոնական Ասիան ովկիանուններից հեռու յե գտնվում և Միջագատված ե լեռնաշղթաներով: Ծովից փչող խոնավ քամիները այդ լեռների պատճառով չեն կարողանում խոնավություն հասցնել Կենտրոնական Ասիայի ներսը: Ահա այդ ե պատճառը, վոր նրա կլիման շատ չոր է. անձրեներ շատ քիչ են գալիս և ընդարձակ տարածություններ ծածկված են անապատներով ու չոր տափաստաններով:

Բաց արեք «Աշխարհագրական տետրը» և գիտեցեք Ասիայի մըթնոլորտային տեղումների, բուսականության և ազգարնակության խտության քարտեզները և ասացեք. 1. Վորչափ մթնոլորտային տեղումներ են թափում Կենտրոնական Ասիայում (այդ թվերը դուք կը գտնեք քարտեզի տակ), սանտիմետրերով արտահայտած): 2. Բուսականությունն այստեղ առաջանակ է. անտառներ կմն, ինչնու այստեղ շատ քիչ մարդ և ապրում: Հիշեցեք, ի՞նչ լեռներով ե շրջապատված Կենտրոնական Ասիան:

Հյուսիսային Ասիան (Սիրիրը) ցուրտ է. սառնամանիքներն այստեղ հասնում են 40—50°-ի: Ովկիանոսի մոտ գետնինն այն խորն ե սառչում, վոր ամառվա ընթացքում միայն գետնի յերեսն ե հալվում: Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսից նա շատ քիչ գոլորշիներ ե ստանում, իսկ Հնդկական և Խաղաղ ովկիանոսից բաժանվում ե բարձր լեռներով, այդ պատճառով Հյուսիսային Ասիայի կլիման չոր է:

Դիտեցեք վերը հիշած քարտեզները և ասացեք. 1. Հյուսիսային Ասիայի վոր մասում ավելի քիչ մթնոլորտային տեղումներ են թափում: 2. Ի՞նչպիսի բուսականություն կա այնտեղ: 3. Ի՞նչու տունդրավում: 4. Սիրիրի անտառները համարյա բաղացած են շամի և յեղենի ծառերից, ինչնու: 5. Արմավենին այնտեղ կարող գաղած են շամի և յեղենի ծառերից, ինչնու: 6. Սիրիրի ազգարնակությունը խիտ է, ինչնու: 7. Սիրիրուտ մեկ քառ. կիլոմետրի վրա քանի մարդ և ապրում:

Հարավային Ասիան (Հնդկաստանը, Հնդկաչինը և Մալայան արշիպելագը) ունի շատ տաք կլիմա (ինչու): Զմեռ այստեղ չի լինում և գետինը յերբեք ձյունով չի ծածկվում: Մանավանդ մեծ նշանակություն ունեն մուսասին կոչվող քամիները, վորոնք, ինչպես զիտենք, կես տարի ծովից են փչում, իսկ կես տարի՝ ցամաքից գեղի ծով: Հարավային Ասիան ամբողջ Ասիայի ամենախոնավ մասն եւ: Առատ տաքության ու խոնավության պատճառով բուսականությունն այստեղ շատ ճոխ եւ: Նկ. 44. Պարսիկները խաշխաշը կտրում, հավանդարձակ տարածությունները քում են: Այդ խաշխաշից պատրաստվում եւ ափեն: ծածկված են արեագարձային խիտ անտառներով. թեյը, բրինձը, արմավենին, սուրճը և այլն մեծ բերք են տալիս ազգաբնակության:



Դիտեցեք քարտեզները և տացեք, վ՞րչափ մթնոլորտային տեղումներ են թափվում այստեղ: 2. Ի՞նչպիսի անտառներ կան: 3. Ազգաբնակությունը խիտ եւ: 4. Համեմատեցեք կենտրոնական Ասիան Հարավ. Ասիայի հետ. Ի՞նչ տարբերություն կա բուսականության, կլիմայի և ազգաբնակության տեսակետից:

Արևիլյան Ասիան այսինքն Ասիայի այն մասը, վոր ընկած է կենտրոնական Ասիայից գեղի արևելք, նույնպես խոնավ և տաք կլիմա ունի: Նրա մոտով անցնում եւ կուրո-Սիվո տաք հոսանքը, վորը Արևելյան Ասիայի համար ունի այնպիսի նշանակություն, ինչպիսի նշանակություն ունի Գոլ'ֆշտամը արևմտյան Յեվրոպայի համար: Հարավարևելյան մուսասիներն անցնելով այդ հոսանքի վրայով հագենում են գոլորշիներով և ցամաքին մթնոլորտային առատ տեղումներ տալիս: Կլիման այնքան տաք եւ, վոր Յաղոնական կղզիներում աճում են մշտականաշ բույսեր, թեյ, բրինձ և այլն:

Դիտեցեք քարտեզները: 1. Մթնոլորտային տեղումները վ՞րչափ են: 2. Ի՞նչպիսի անտառներ կան: 3. Բնակիչները խիտ են. ինչու:

Կենտրոնական Ասիայից գեղի արևմուտք ընկած է Արևվմտյան Ասիան, վորի մասերն են Փոքր-Ասիան, Հայկական լեռնաշխարհը, Արարիան, Միջագետքը, իրանը և Թուրքանը (Թուրքաստանը): Այստեղ կլիման չոր եւ: Իրանում և Արարիայում ընդարձակ տարածություններ ծածկված են ավազով: Բնակիչները կենտրոնացած են գլխավորապես ջրառատ տեղերում:

Ցույց տվեք Արևմտյան Ասիայի ամենաչոր տեղերը: Ցույց տվեք Արարիայի և Իրանի անապատները: Ցույց տվեք Հայաստանի տեղը և գտեք նրա խոնավության չափը: Փոքր-Ասիայի վճր մասն ավելի չոր եւ ցույց տվեք:

Աշխատանք.—Ասիայի տարբեր խոնավություն ունեցող տեղերը ներկեցեք տարբեր գույներով («Աշխ. տեսր»—աշխ. 9):

Տարբեր գույներով ներկեցեք Ասիայի բուսական շրջանները («Աշխարհ. տեսր»—աշխ. 10):

Ա.Մ.Ա.Յ. Ա.Զ.Գ.Ա.Բ.Ն.Ա.Ռ.Խ.Թ.Յ.Ը.Ը.Ը.

Ներկայում Ասիայում ապրում եւ մոտ 1000 միլիոն մարդ, այսինքն յերկրագնդի ամբողջ ազգաբնակության կեսից ավելին: Ասիայի մակերեսույթի մեծությունն եւ 44 միլիոն քառակուսի կիլոմետր, ուրեմն մեկ քառ. կիլոմետր տարածության վրա ապրում են մոտ 23 մարդ:


Տունդրաների ազգաբնակությունը շատ սակավ եւ: Յերկրագործությունը հնարավար չեւ, իսկ ընտանի կենդանիներից կան միայն հյուսիսային յեղջերուներ և լծկան շներ:

Հիշեցեք սամուդների կենցաղը:

Տունդրաներից հարավ ձգվում է տայգան, վոր նույնպես սակավամարդ եւ: Խուլ անտառներում տեղադրեղ ապրում են թափառական վորսորդներ, և միայն մեծ գետերի ափերին և Սիբիրի յերկաթուղու յերկարությամբ ձգվում են ոռուսական գյուղեր: Սիբիրի հարավային մասերում ոռուսները կտրատել են տայգաները և այժմ պարագում են յերկրագործությամբ և անասնապահությամբ:

Ասիայի տափառականները չոր են, և յերկրագործության համար մեծ մասամբ անհարմար. այդ պատճառով այնտեղ գլխավորապես ապրում են քոչվոր ժողովուլուններ, վորնք, յերբ մի տեղ խոտը չորանում եւ կամ պակասում, իրենց անասունների հետ քոչում են մի ուրիշ՝ արոտատեղի: Նստակյաց ժողովուրդներն ապրում են գետերի ափերին, բայց այդպիսի տեղեր շատ քիչ կան:

Բոլորովին ուրիշ պատկեր ենք տեսնում Հարավային և Արևելյան Ասիայում, վորտեղ ապրում ե ամրող մարդկության կեսը: Հնդկական և Չինական դաշտավայրերում ազգաբնակությունը այնքան խիտ է, վորքառ. կիլոմետր տարածության վրա ապրում ե 200-ից ավելի մարդ: Տաք կիմայի, պարարտ հողի և առատ խոնավության պատճառով մարդկե շատ վաղուց այստեղ զբաղվում են յերկրագործությամբ:



Նկ. 45. Թյուրք զյուղացիներ (Փ. Ասիայի միջն ժամանակակից):

Դիտեցեք ազգաբնակության խտության քարտեզը («Աշխարհգրականություն»):

Աշխատանք.—Ասիայի ազգաբնակության խտությունը տարբեր գույներով ներկեցեք («Աշխարհ. տեսք»—աշխ. 11):

Ասիայի ազգաբնակության մեծ մասը դեղին ցեղին ե պատկանում: Դեղին ցեղի ժողովուրդներ են յապոնացիները, չինացիները, մոնղոլները, մալայացիները, տաճիկները և այլն:

Նրանք վնրտեղ են ապրում: Դիտեցեք քարտեզը («Աշխ. տեսք»):

Սպիտակ ցեղին են պատկանում հայերը, վրացիները, քյուրդերը, պարսիկները, հնդիկները, ոռուները և այլն:

Յույց տվեք սպիտակ ցեղի բնակության տեղերը,

Հնդկաստանում և Յելլոնում ապրում են դրավիդները, փորոնք և ցեղին են պատկանում:

Աշխատանք.—Տարբեր գույներով ներկեցեք Ասիայի ցեղերի քարտեզը («Աշխարհագր. տեսք»—աշխ. 12):

Ասիայի պետությունները յեվ գաղութները.—Ասիայում գըտնվում են հետեյալ անկախ պետություններ՝ Չինաստանը, Յավոնիան, Պարսկաստանը, Թյուրքիան (Տաճկաստան), Մոնղոլիան և այլն: Այդ պետություններից ամենաառժեղն ե Յավոնիան: Նա յուր ար-

դյունաբերությամբ, ուազմանավերով և առևտրով յերկրագնդի մեծ պետություններից մեկն ե:

Ասիական յերկրներից—Սիբիրը, Թուրքանը (Կազակստան, Թուրքմենստան, Ռւզբեկստան... հանրապետությունները) և Անդրկովկասը ընդունել են Խորհրդային իրավակարգ և մտնում են Խորհրդային Միության միջ:

Ասիայի մնացած մասերը գրավել են յեվրոպական պետությունները. այսպես՝ Անգլիան գրավել է Հնդկաստանը, Ֆրանսիան՝ Հընդկաչինի մի մասը, Միացյալ Նահանգները՝ Ֆիլիպպյան կղզիները, Հոլանդիան՝ Մալայան արշիպելագի կղզիները և այլն: Այդ կալվածները կոչվում են գաղութներ: Յուրաքանչյուր պետություն յուր գաղութներից արտահանում ե զանազան հում նյութեր (բամբակ, բուրդ, հանքեր) և ուտելեղեն, իսկ գրա փոխարեն ներմուծում ե յուր գործարանային ապրանքները և բավական թանգ գներով վաճառում տեղացիներին: Գաղութների ազգաբնակությունը դրանից առաժում ե և դժգոհում տիրող պետության գեմ: Այդպիսի գժգոհնություն այժմ նկատվում ե, որինակ՝ Հնդկաստանում Անգլիայի գեմ: Գաղութն իր ձեռքում պահելու համար, ամեն մի պետություն առանձին գորք և պահում այնտեղ և դրանով յուր ցանկացած կարգը պահանջառ:

Աշխատանք.—Գծեցեք գլխավոր պետությունների Ասիայում ունեցած կալվածների գիւղարամը («Աշխարհ. տեսք»—աշխ. 14):

Աշխատանք.—Դիմագրամի միջոցով ցույց տվեք Ասիայի գլխավոր պետությունների և գաղութների ազգաբնակության մեծությունը («Աշխարհագր. տեսք»—աշխ. 15):

Ա Բ Ե Վ Ա Մ Տ Ե Ա Ն Ա Ս Ի Ա

Ասիայի մասին ընդհանուր տեղեկություններ ստանալուց հետո, մենք այժմ կանգ կառնենք նրա առանձին մասերի վրա, և վորովհետեւ մենք ապրում ենք Արևմտյան Ասիայում, ուստի առաջին հերթին կխոսենք այն յերկրների մասին, վորոնք գտնվում են Արևմտյան Ասիայում:

Արևմտյան Ասիան ինչ յերկրներից ե բարկացած:

Պ Ա Ր Ս Ա Ա Ս Ա Ս Ա Ն

Պարսկաստանը գտնվում է Խորհրդային Հայաստանի հարավարևելյան կողմը և բնում է իրանի մեծ մասը:

Քարտեզի վրա Պարսկաստանը փոքր է յերկում, բայց, իսկապես, նա Ֆրանսիայից մոտ յերեք անգամ մեծ է։ Նրա մակերեւ-



Նկ. 46. Հնդկներ—նրանց հագուստը, զարդարանքները և բնակարանը։ Հնդկերն բանաններ են։ Հարուստ հնդկը վերադառնում է վորով։

Վայցը հագասար է 1,600,000 քառ. կիլոմետրի, իսկ բնակիչների թիվը՝ մոտ 10 միլիոն է։ Միջին հաշվով ամեն մի քառ. կիլոմետրի վրա ապրում է մոտ 7 մարդ։

Պարսկաստանի ազգաբնակությունն է խիս, թե Հայաստանինը։

Նրա սահմաններն են հյուսիսից Խորհրդային Միությունը, արևմուտքից՝ Թյուրքիան և Միջագետքը, հարավից՝ Հնդկական ովկիանոսը, իսկ արևելքից՝ Ավղանստանն ու Բելուջիստանը։

Աշխատանք.՝ Պարսկաստանը վորեե գույնով ներկեցիր։ Գրեցեք Պարսկաստան, Պարսից ծոց, Կասպից ծով, Հայաստան, Թյուրքիա և Ավղանստան անունները («Աշխատհ. տետր»—աշխ. 13)։

Կիմա.՝ Պարսկաստանը ընդհանրապես չոր կիմա ունի. Վրա պատճառը ըրջապատղ լեռներն են։ Հարավում ձգվում են Հարարավային Իրանական, իսկ հյուսիսում ելքուրս լեռնաշղթաները, վորոնք ծովից Փչող քամիների առաջն առնելով, թույլ չեն տայիս, վոր

խոնավությունն անցնի յերկրի ներսը։ Ամբողջ Պարսկաստանի մեկ յերրորդը համարյա անապատներ են։

Յերկրագործությամբ և այգեգործությամբ զբաղվելու համար ամենահարժար տեղերն են գետերի և գետակների ափերը։ Գետերից շատերը, լճերին չհասած, սատիկ շոգից գոլորշիանում են և շատերն ել կորչում են ավազների մեջ։ Բոլոր լճերն աղի յեն, իսկ հողը աղեխառն։

Հասկանալի յե, թե ինչպիսի մեծ նշանակություն պետք է ունենա վոռոգման խնդիրը Պարսկաստանում։ Այդիներն ու արտերը ջրելու համար շատ անգամ ահագին հեռավորությունից առուներ են անցկացնում, և վորպեսզի ամառվա շոգերին ջուրը շատ չգոլորշիանա, այդ ջրանցքները գետնի տակով են բերում։

Բոլորովին ուրիշ կիմա ունի Պարսկաստանի այն մասը, վորընկած և կասպից ծովի ափին։ Կասպից ծովից Փչող քամիները վոռոգում են լեռների լանջերը և գոյացնում բավականաչափ գետակներ, վորոնք, ցած հոսելով, կենդանություն են տալիս դաշտերին։ Կասպից ծովի յեզերքով են ձգվում Պարսկաստանի ամենաարգավանդ և ամենախոնավ ըրջանները՝ Գիլանը և Մազանդարանը։

Բնակիցների գրադմունիք. — Պարսկաստանը յերկրագործական յերկր է։ Բնակիչների մեծ մասն ապրում են գյուղերում և զբաղվում են գյուղատնտեսությամբ։ Բայց պարսիկ գյուղացին աղքատ և հողագուրկ. հողը մեծ մասամբ պատկանում է խաներին կամ շահին, վորոնք վարելահողերը կապալով տալիս են գյուղացիներին և բերքի մեկ մասն իրենք վերցնում։ Հացահատիկներից ցանում են ցորեն, կորեկ և գարի։ Գիլանում և Մազանդարանում մեծ տեղ են բռնում բրնձի և բամբակի ցանքսերը։

Պարսիկ գյուղացու համար մեծ նշանակություն ունի այգեգործությունը։ Պարսկական խաղողը, գեղձը, ծիրանն ու թուզը հայտնի յեն իրենց քաղցր համով։ Խաղողից պատրաստում են զանազան տեսակ չամիչներ, իսկ գեղձը, ծիրանն ու թուզը չորացնում են և մեծ չամիչներ, իսկ գոշիկ ափերին տարածված քանակությամբ արտահանում։ Պարսիկ ծոցի ափերին տարածված են փյունիկյան արմավենու մշակությունը։

Լեռնոտ տեղերում և առհասարակ այնտեղ, վորտեղ յերկրագործությունը բերք չի տալիս, այժմ ել թափառում են քոչվոր ժողովուրդներ, վորոնք մեծ քանակությամբ վոչխար են պահում։ Վոչխարի բրդից գորգեր են պատրաստում, կաշվից՝ պարսկական սափ-

յան, իսկ միուր գորրծածում են իբրև ուտելիք։ Այժի բրդից պատրաստում են վրանների համար թաղիք։ Բայց այդ կենդանիներն ուղղի և ծիռ տեղը չեն բռնում։ Յերկրի ներսը, յերկաթուղիներ չլինելու պատճառով, այժմ ել ապրանքները կարավաններով են փոխադրվում։

Առեվտուր. — Մինչև այժմ Պարսկաստանի առևտուրը գլխավորապես կատարվում է կարավաններով։ Յերկաթուղիներն ունեն ընդամենը 563 կիլոմետր յերկարություն։ Ամենակարեռը Զուլֆա — Թավրիզ յերկաթուղային գիծն է, վորով առևտուր են անում Խորհրդաշին Միության հետ։ Մյուս ճանապարհը, վորով Պարսկաստանն առևտուր է անում Խորհրդային Միության հետ, կասպից ծովն եւ Ռաշտի և հնգելու վրայով Պարսկաստանը Խորհրդային Միությունից ներմուծում է գլխավորապես ջթեղեն և շաքար, իսկ արտահանում է բրինձ, բամբակ, բուրդ, չոր միրգ և այլն։

Նա մեծ չափերով առևտուր է անում նաև Անգլիայի հետ (Պարսից ծոցով՝ Բուշիր քաղաքի վրայով)։ Անգլիայից ներմուծում են գլխավորապես գործարանային ապրանքներ, իսկ Պարսկաստանից գըլխավորապես արտահանում են հում նյութեր։ Արտահանվող ապրանքների մեջ մեծ տեղ է բռնում նավթը, վորով Պարսկաստանը այժմ ամբողջ յերկրագնդի վրա չորրորդ տեղն է բռնում։

Պիտական կազմը յեւ գլխավոր քաղաքները. — Պարսկաստանն անկախ պետություն է։ Յերկրը կառավարում է շահը, վորի իրավունքները սակայն սահմանափակված են միջլիսով, այսինքն ժողովրդի կողմից ընտրված պատգամավորների ժողովով։

Մայրաքաղաքն է Թեհրանը, վորի բնակիչների թիվն է մոտ 220.000։ Յերկրորդ մեծ քաղաքն է Թավրիզը, մոտ 200.000 բնակչութ։ Մյուս քաղաքներից նշանավոր են Սպահան, Մեշեղ (գորգերով), Ռաշտ, Ենգելի (նավահանգիստ կասպից ծովի վրա), Բուշիր (նավահանգիստ Պարսից ծոցում)։

Աշխատանք. — Համբ քարտեզի վրա նշանակեցեք գլխավոր քաղաքները։ Մայրաքաղաքի տակն ընդգծեցեք («Աշխ. տետր», աշխատանք 16)։

Մասշտաբով չափեցեք Յերեանի և Թեհրանի միջի հեռավորությունը։

Մասշտաբի ոգնությամբ վորոշեցեք Ռաշտի և Բուշիրի միջի հեռավորությունը։

Գեցեցեք Պարսկաստանի արտաքին դիագրամը («Աշխ. տետր», աշխատանք 17)։

Թ Յ Ո Ւ Ր Ք Ի Ա.

Թյուրքիան Խորհրդային Հայաստանի հարևանն է։ Սրանք իրարեց բաժանվում են Արաքսով և Ախուրյանով։

Թյուրքիայի սահմանները կազմում են հարավից՝ Միջերկրական ծովը, Ասորիքը և Միջագետքը, արևելքից՝ Պարսկաստանը, Հյուսիսից՝ Սև ծովը և վերջապես դաշտին Հայաստանը և Վրաստանը, հյուսիսից՝ Սև ծովը և վերջապես արևմուտքից՝ Եգեյան ծովը, վոր Միջերկրական ծովի մի մասն է։

Այսպիսով Թյուրքիայի մեջ մտնում են ամբողջ Փոքր-Ասիան և Հայկական լեռնաշխարհի մի մասը։

Աշխատանք. — Ասիայի քարտեզի վրա ցույց տվեք Թյուրքիայի սահմանները և սահմանակից յերկրները։

Համբ քարտեզի վրա գտեք Թյուրքիայի տեղը։ Ներկեցեք Թյուրքիան, Նշանակեցեք հարևան յերկրները, ծովերը («Աշխարհ. տետր», աշխատանք 13)։

Թյուրքիայի մակերևույթը հավասար է մոտ 785.000 քառ. կիլոմետրի, իսկ բնակիչների թիվը՝ մոտ 12 միլիոն է։ Բնակիչների մեծ մասը թյուրքեր (տաճիկներ) են, բացի նրանցից Թյուրքիայում ապրում են քյուրդեր, հույներ, հայեր և այլն։

Աշխատանք. — Գտեք Թյուրքիայի աղքարնակության խտությունը։ Պարսկաստանն է խիտ, թե Թյուրքիան։

Թյուրքիայի գլխավոր մասն է Փոքր-Ասիան, վոր, ինչպես գիտենք, մի բարձրավանդակ է, շրջապատված Պոնտոսի և Տավրոսի լեռներով։ Նրա յեզերքները շրջապատող ծովերից բավական շատ խոնավություն են ստանում, ունեն տաք, ծովային կլիմա և պարագաներ, իսու, իսկ ներսը տարածվում են չոր տափաստաններ։

Գյուղատնտեսությունը բնակիչների գլխավոր զբաղմունքն է։ Չոր տեղերում (գլխավորապես Փոքր-Ասիայի ներսը) զբաղվում են անսանապահությամբ։ Պահում են մեծ քանակությամբ այծ և վոչխար։ Փոքր-Ասիայի անգորական այծը ամբողջ յերկրագնդի վրա հայտնի յեր քնքույշ ըրդով։

Հացահատիկների ցանքսերի կողքին փովում են ընդարձակ տարածություններ, ծածկված ծխախոտով, ձիթենիներով, խաղողի այցիներով, բամբակով, խաշխաշով և զանազան պտղատու ծառերով։

Արտահանում են մեծ չափերով թուզ և չորացրած խաղող։

Թյուրքիայի բնակիչների համար մեծ նշանակություն ունի և

յան, իսկ միուր գործածում են իբրև ուտելիք։ Այժմ բրդից պատրաստում են վրանների համար թաղիք։ Բայց այդ կենդանիներն ուղղուել է ծիռւ տեղը չեն բռնում։ Յերկրի ներսը, յերկաթուղիներ չլինելու պատճառով, այժմ ել ապրանքները կարավաններով են փոխադրվում։

Առելիսուր. — Մինչև այժմ Պարսկաստանի առևտուրը գլխավորապես կատարվում է կարավաններով։ Յերկաթուղիներն ունեն ընդամենը 563 կիլոմետր յերկարություն։ Ամենակարեորը Զուլֆա-Թավրիդ յերկաթուղային գիծն է, վորով առևտուր են անում Խորհրդային Միության հետ։ Մյուս ճանապարհը, վորով Պարսկաստանն առևտուր է անում Խորհրդային Միության հետ, կասպից ծովն եւ Ռաշտի և հնգելու վրայով Պարսկաստանը Խորհրդային Միությունից ներմուծում է գլխավորապես ջթեղեն և շաքար, իսկ արտահանում է բրինձ, բամբակ, բուրդ, չոր միրգ և այլն։

Նա մեծ չափերով առևտուր է անում նաև Անգլիայի հետ (Պարսից ծոցով՝ Բուշիր քաղաքի վրայով)։ Անգլիայից ներմուծում են գլխավորապես գործարանային ապրանքներ, իսկ Պարսկաստանից գըլխավորապես արտահանում են հում նյութեր։ Արտահանվող ապրանքների մեջ մեծ տեղ է բռնում նավթը, վորով Պարսկաստանը այժմ ամբողջ յերկագնդի վրա չորրորդ տեղն է բռնում։

Պիտական կազմը յեվ գլխավոր բաղադիները. — Պարսկաստանն անկախ պետություն է։ Յերկիրը կառավարում է շահը, վորի իրավունքները սակայն սահմանափակված են մեջիսով, այսինքն ժողովրդի կողմից ընտրված պատգամավորների ժողովով։

Մայրաքաղաքն է Թիհրանը, վորի բնակիչների թիվը եւ մոտ 220.000։ Յերկրորդ մեծ քաղաքն է Թավրիզը, մոտ 200.000 բնակչութիւն։ Մյուս քաղաքներից նշանավոր են Սպահան, Մեշեղ (գորգերով), Ռաշտ, Ենջելի (նավահանգիստ կասպից ծովի վրա), Բուշիր (նավահանգիստ Պարսից ծոցում)։

Աշխատանք. — Համբ քարտեզի վրա նշանակեցեք գլխավոր քաղաքները։ Մայրաքաղաքի տակն ընդգծեցեք («Աշխ. տետր», աշխատանք 16)։

Մասշտաբով չափեցեք Յերևանի և Թիհրանի միջի հեռավորությունը։

Մասշտաբի ոգնությամբ վորոշեցեք Ռաշտի և Բուշիրի միջի հեռավորությունը։

Գծեցեք Պարսկաստանի առևտուրի դիագրամը («Աշխ. տետր», աշխատանք 17)։

Թ Յ Ո Ւ Ք Ի Ա.

Թյուրքիան Խորհրդային Հայաստանի հարևանն է։ Սրանք իրարեց բաժանվում են Արաքսով և Ախուրյանով։

Թյուրքիայի սահմանները կազմում են հարավից՝ Միջերկրական ծովը, Ասորիքը և Միջագետքը, արևելքից՝ Պարսկաստանը, Խորհրդային Հայաստանը և Վրաստանը, հյուսիսից՝ Սև ծովը և վերջապես արևմուտքից՝ Եգեյան ծովը, վոր Միջերկրական ծովի մի մասն ե։

Այսպիսով Թյուրքիայի մեջ մտնում են ամբողջ Փոքր-Ասիան և Հայկական լեռնաշխարհի մի մասը։

Աշխատանք. — Ասիայի քարտեզի վրա ցույց տվեք Թյուրքիայի սահմանները և սահմանակից յերկրները։

Համբ քարտեզի վրա գտեք Թյուրքիայի տեղը։ Ներկեցեք Թյուրքիան, Նշանակեցեք հարևան յերկրները, ծովերը («Աշխարհ. տետր», աշխատանք 13)։

Թյուրքիայի մակերևույթը հավասար է մոտ 785.000 քառ. կիլոմետրի, իսկ բնակիչների թիվը՝ մոտ 12 միլիոն է։ Բնակիչների մեծ մասը թյուրքեր (տաճկիներ) են, բացի նրանցից Թյուրքիայում ապրում են քյուրդեր, հույներ, հյույսեր և այլն։

Աշխատանք. — Գտեք Թյուրքիայի աղգարնակության խտությունը։ Պարսկաստանն է խիտ, թե Թյուրքիան։

Թյուրքիայի գլխավոր մասն է Փոքր-Ասիան, վոր, ինչպես գիտենք, մի քարձրավանդակ է, շրջապատված Պոնտոսի և Տավրոսի լեռներով։ Նրա յեղերքները շրջապատող ծովերից բավական շատ խոնավություն են ստանում, ունեն տաք, ծովային կլիմա և պարարտ հող, իսկ ներսը տարածվում են չոր տափաստաններ։

Գյուղանստեսությունը բնակիչների գլխավոր զբաղմունքն է։ Չոր տեղերում (գլխավորապես Փոքր-Ասիայի ներսը) զբաղվում են անասնապահությամբ։ Պահում են մեծ քանակությամբ այծ և վոչխար։ Փոքր-Ասիայի անգորական այծը ամբողջ յերկագնդի վրա հայտնի յեր քնքույշ բրդով։

Հացահատիկների ցանքսերի կողքին փովում են ընդարձակ տառածություններ, ծածկված ծխախոտով, ձիթենիներով, խաղողի այգիներով, բամբակով, խաշխաշով և զանազան պաղատու ծառերով։

Արտահանում են մեծ չափերով թուզ և չորացրած խաղող։ Թյուրքիայի բնակիչների համար մեծ նշանակություն ունի և

շերամապահությունը: Մետաքսը արտահանության գլխավոր առարկաներից մեկն ե:

Գործարաններ շատ քիչ կան: Ժողովրդի համար մեծ նշանակություն ունեն մանր արհեստանոցները:

Անգլիան, Ֆրանսիան և Միացյալ Նահանգները Թյուրքիայից արտահանում են զանազան հումք՝ նյութեր—ծխախոտ, բուրդ, մետաքս, ափիոն, միրդ և այլն, իսկ ներմուծում են մեքենաներ, կտորեղեն և այլն:

Թյուրքիան հանրապետություն ե: Մայրաքաղաքն է Անգորան: Առաջնակարգ նավահանգիստներ են Զմյուռնիան, վոր յերկաթուղով միացած և Փոքր-Ասիայի միջին մասերի հետ, Տրապիզոնը և Սկուտարին:

Բացի Փոքր-Ասիայից Թյուրքիային ե պատկանում Բալկանյան թերակղու մի մասը (Յեվրոպայում), վորի գլխավոր քաղաքն է Կոստանդնովոլիս:

Հայաստանը.—Համբ քարտեղի վրա նշանակեցեք լեռնաշղթաները և գլխավոր քաղաքները («Աշխարհ. տետր», աշխ. 16):

Մասշաբով չափեցեք Կոստանդնովոլսի հեռավորությունը Յերկանից:

Մեր վոր կողմն ե գտնվում Կոստանդնովոլիսը:

Մ Ի Զ Ա Գ Ե Ց Ք Ե Տ Վ Ք

